ԷՀՄԻԱԾԻՆ

1970-Գ

ՌՆԺԸ ԻԵ ՏԱՐԻ

Մարտ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Գ

1970

ՊԱ-12.549

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հայ եկեղեցու կամարների ներքո նորից հնչում է «Ի կոյս ի վիմէն» հրաշափառ և սուրբ Հարության սրտառուչ օրհներգը, կյանքի ու լույսի կենարար ավետիսը՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց», և քրիստոնյա բոլոր հավատավոր ու հուսացյալ հոգիները լցնում է աստվածային լուսավորությամբ, հոգևոր ուրախությամբ և բերկրալից խնդությամբ. «Որ յարոյցն զՅիսուս և զմեզ ընդ Յիսուսի յարուցէ» (Բ Կորնթ. Դ 14):

Հարության տոնը՝ հայկական Զատիկը, համաժողովրդական ցնծության և ուրախության տոնն է, բովանդակ մարդկության փրկության, ազատության տոնը. գարնան, բնության վերազարթոնքի հետ՝ հանդեսը **մարդու հոգևոր և բարոյական վերակենդանության:**

Այս տարվա զատկական Իր քարոզում Հայոց Հայրապետը նշում էր.

«Քրիստոսի Հարության ավետիսը իբրև փրկարար լույս, կշողա այսօր մեր հուսացյալ հոգիներուն վերև: Զարթոնքի զգացում մը կհամակե մեր էությունը ամբողջ: Կլեցվինք քաղցր հույզերով, զվարթարար խոհերով: Ճամփաներ կբացվին դեպի մյուս ափը կյանքին, դեպի կատարները փրկության հույսին, հավերժության տեսիլքին»:

Քրիստոսի Հարության ավետիսը պատմության մեջ խոստումնալից սկիզբը հանդիսացավ մի նոր կյանքի և մի նոր շարժման և, միաժամանակ, մղիչ ուժը՝ քրիստոնեական քաղաքակրթության:

Քրիստոսի Հարության ավետիսով վերակենդանացած և պայծառացած առաքյալները վերակենդանացրին իրենց ժամանակակից աշխարհը, բարոյապես մեռած մարդկությանը կյանք տվին և հավերժական կյանքի լույսով ու հավատով լուսավորեցին սերունդների ճանապարհը:

Քրիստոնյա աշխարհը, ընդհանրական եկեղեցին Հարության ավետիսով և հավատով անցան քսան դարերի երկար ճանապարհը: Հարության պատմական փաստն ու ավետարանական վկայությունը «կենտրոնական ճշմարտությունը», եկեղեցու կյանքի և գոյության հիմնաքարը հանդիսացան:

Այսօր ողջ աշխարհը, ավելի քան երբեք, կարիքն ունի դարձյալ հոգևոր, բարոյական վերազարթոնքի՝ Հարության լույսով և պատգամով. «Եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւնն մեր, ընդունայն են և հաւատքն ձեր» (Ա Կորնթ. ԺԵ 14): Ամեն քրիստոնյա խղճմտանքի համար պատմական անսուտ վկայություն է և հոգեկան մեծ ճշմարտություն՝ Պողոս առաքյալի այս քարոզը:

Քրիստոսի Հարությունը կյանքի հաղթանակն է մահվան դեմ, **լույսի** հաղթանակը՝ **խավարի** և չար ուժերի դեմ, **սիրո** հաղթանակը՝ **ատելության** դեմ, **խաղաղության** հաղթանակը՝ **պատերազմի** դեմ:

Կյանքում դեռևս գոյություն ունեն մահն ու չարիքը, որոնք ծանր մղձավանջի նման ճնշում են մարդկային մտածողությունն ու

հոգին: Չենք կարող իհարկե դրանք արմատախիլ անել, բայց կարող ենք նվազեցնել մահվան ծանրությունը հոգիների և մտքերի վրա: Չենք կարող արմատախիլ անել չարիքը աշխարհի վրայից, բայց կարող ենք այն վնասազերծել, հաղթահարել և մարդուն ազատել վշտի և տառապանքի հարվածներից:

Հարության տոնը, իր հոգևոր և բարոյական առումով և իր փրկարար խորհրդով, հաստատում է **կյանքի իրավունքն ու իշխանությունը** մահվան ու չար ոգիների դեմ: «Զի զկեանս ունիցիք, և առաւել ևս ունիցիք»:

Կյանքը մեծագույն ստեղծագործությունն է և բարիքը՝ տրված մարդուն: Բայց մահը բնության օրինաչափությունն է:

Պատմության մեջ միայն Քրիստոսը «մահուամբ զմահ կոխեաց» և մարդկությունն ազատեց նրա սարսափներից և իշխանությունից:

Հիմնական և կարևոր հարցն է Քրիստոսի հարության լույսի ներքո **ճանաչել մեզ և յուրաքանչյուր մարդու համար ապրելու սրբազան իրավունքը,** որովհետև մարդը որպես ստեղծագործության թագն ու պսակը՝ կոչված է «առաւել ու յաւերժական կեանքի», վեհ նպատակների: Մարդու գերագույն կոչումն է՝ երկրի վրա իր ավարտին և կատարելությանը հասցնել արարչագործությունը՝ Աստուծո օրհնության ներքո: Աստուծո պատկերով և հոգով ստեղծված մարդը «գործակիցն է Աստուծուն» (Ա Կորնթ. Գ 9):

Այո, ըստ քրիստոնեական մեր հավատի, **իրավունքը և իշխանությունը կյանքինն են,** ստեղծագործ, շինարար և բարի ուժերինը: Կյանքում կա՞ ավելի գեղեցիկ և ավելի սրտապնդիչ մխիթարություն և ստուգություն մարդու համար, քան նայելը մահվան աչքերին և ասել. «Ո՞ւր է մահ յաղթութիւն քո, և ո՞ւր է դժոխք խայթոց քո»:

Մարդը Ավետարանի լույսի մեջ վերածընված և Հարության խորհուրդով պայծառացած ուղևորն է հավերժության. **«Տեսիլք փրկության և հավերժության, ահա գոյության իմաստը և փառքը կյանքին, խորհուրդը մարդոց և ժողովուրդներու ստեղծարար ճիգերուն, մաքառումներուն, իրագործումներուն»,**—գրում է արդարորեն Հայոց Հայրապետը զատկական Իր քարոզում:

Հայությունը որպես ժողովուրդ և եկեղեցի հավատացել է միշտ Հարության խորհրդին:

Մեր ժողովրդի արյունով գրված հայոց պատմությունը եղել է սրբազան պայքար կյանքի իրավունքի հաստատման համար, «հարուցյալ և փառավորյալ կյանքի» հաղթանակի համար, լուսաբաղձ նահատակության հասնող սրտառուչ հավատով:

Քսան երկար դարերը պատմության չեն կարողացել հայ հավատացյալ ժողովրդի հոգում մարել Հարության լույսը և թափուր գերեզմանի խորհուրդը: Մեր ժողովուրդը Քրիստոսի հարության փաստին և ստուգության մեջ տեսել է միշտ իր հոգևոր, մշակութային, ազգային-հայրենասիրական վերակենդանությունը, իր «փառավորյալ և նորոգյալ կյանք»-ի գեղեցկությունն ու խորհուրդը:

Հարության, հավերժության տեսիլք ունեցող ժողովուրդը չի մահանա: Եվ հայը այդ ժողովուրդն իսկ է:

Եվ այսօր ահա իր գերեզմանից, իր ավերակներից հարություն է առել հրաշափառորեն մեր ժողովուրդը և հայրենական իր վերակենդանության գաղափարով ու փառքով գոտեպնդված քայլում է դեպի իր էլ ավելի պայծառ ապագան:

Հարության այս սրբազան լուսաբացին, ինչքա՜ն ջերմ, ինչքա՜ն իրավ և ինչքա՜ն գոտեպնդիչ է հնչում վերածնված մեր մայր հողից և ս. Էջմիածնի հոգևոր բարձունքից Հայոց Հայրապետի Հարության պատգամը և ավետիսը՝ ուղղված Իր զավակներին.

«Հոգևոր զավակներ Մեր հարազատ, զավակներ Մեր ցանկալի, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, նայեցեք Հիսուսի դատարկ գերեզմանին և հավատացեք Հարության հրաշքին: Հավատացեք որպեսզի միշտ վառ մնա լույս կանթեղը Արագածի կատարին, որպեսզի միշտ դեպի վեր սլանա հայկյան հանճարը արարչագործ, որպեսզի հայոց երկնակամարին վրա միշտ ազատ ու պայծառ շողան աստղերը անմահության հույսին»:

Փառք հրաշափառ Հարության քո, Տէր:

Եվ փառք հրաշափառ հարության քո, ազգ իմ սիրելի, ժողովուրդ հայոց:



ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական կաթոլիկ եկեղեցու քահանայապետ, Նորին Սրբություն
ՊԱՎՂՈՍ Զ ՊԱՊԻՆ (Հռոմ),

Կոստանդնուպոլսի հունաց տիեզերական պատրիարք, Նորին Սրբություն
ԱԹԵՆԱԳՈՐԱՍԻՆ (Ստամբուլ),

Մոսկվայի և համայն Ռուսաստանի պատրիարք, Նորին Սրբություն
ԱԼԵՔՍԻԻՆ (Մոսկվա),

Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի պատրիարք, Նորին Սրբություն
ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ-ԻՆ (Ալեքսանդրիա),

Ղպտի ուղղափառ եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲՈՒՆԱ ԿՅՈՒՐԵՂ Զ-ԻՆ (Ալեքսանդրիա),

Երուսաղեմի հունաց պատրիարք, Նորին Սրբություն
ԲԵՆԵԴԻԿՏՈՍԻՆ (Երուսաղեմ),

Անտիոքի և համայն Արևելքի պատրիարք, Նորին Սրբություն
ԹԵՈԴՈՍԻՈՍ Զ-ԻՆ (Դամասկոս),

Անտիոքի և համայն Արևելքի պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄՈՍ Ե-ԻՆ (Բեյրութ),

Անտիոքի սիրիական կաթոլիկ եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ Ա. ՀԱՅԵԿ Բ-ԻՆ (Բեյրութ),

Սիրիական օրթոդոքս եկեղեցու և համայն Արևելքի պատրիարք,
Նորին Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԿՈԲ Գ-ԻՆ (Դամասկոս),

Համայն Եթովպիայի պատրիարք, Նորին Սրբություն
ԲԱՍԻԼԻՈՍԻՆ (Ադիս-Աբեբա),

Հնդկաստանի և Արևելքի մալաբար եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն
ԲԱՍԻԼԻՈՍ ՈԻԿԵՆ Ա-ԻՆ (Քոթայամ),

Համայն Վրաց պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
ԵՓՐԵՄ Բ-ԻՆ (Թբիլիսի),

Ռումին օրթոդոքս եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն
ԺՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (Բուխարեստ),

Բուլղար օրթոդոքս եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն
ԿԻՐԻԼԻՆ (Սոֆիա),

Լիբանանի մարոնիտ պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԻԱԴԵԻՆ (Բեյրութ),

Քենտրբերիի արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և
միտրոպոլիտ, Նորին Սրբություն դոկտ. ՄԱՅՔԼ ՌԵՄՋԻԻՆ
(Լոնդոն),

Աթենքի և համայն Հելլադայի միտրոպոլիտ, Նորին Սրբություն
ՀԵՐՈՆԻՄՈՍԻՆ (Աթենք),

Սերբիայի և համայն Հարավսլավիայի պատրիարք, Նորին Սրբություն
ՀԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),

Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Սրբություն
ՍՏԵՖԱՆԻՆ (Վարշավա),

Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին Սրբություն
ԴՈՐՈՖԵՅԻՆ (Պրագա),

Հայ կաթողիկե եկեղեցու պատրիարք, Նորին Ամենապատվություն
ԻԳՆԱՏԻՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԷ ՊԱԹԱՆՅԱՆԻՆ (Բեյրութ),

Կիպրոսի արքեպիսկոպոս, Նորին Սրբություն
ՄԱԿԱՐԻՈՍԻՆ (Նիկոզիա),

Նորին Ամենապատվություն կարդինալ
ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ (Վատիկան),

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար
դոկտ. Է. ԲԼԵՅԿԻՆ (Ժնև),

Արևմտյան Նյու-Յորքի եպիսկոպոսական եկեղեցու առաջնորդ
ԼՈՐԻՍՏՈՆ ԼԵՎԻՆԳՍՏՈՆ ՍՔԵՅՖ եպիսկոպոսին
(Նյու-Յորք),

Վիեննայի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
կարդինալ ՖՐԱՆՑ ԳՅՈՆԻԳԻՆ (Վիեննա),

Լատվիական ՍՍՀ ավետարանական-լութերական եկեղեցու արքեպիսկոպոս,
Նորին Սրբազնություն Յ. Պ. ՄԱՏՈՒԼԻՍԻՆ (Ռիգա),

Էստոնական ՍՍՀ ավետարանական-լութերական եկեղեցու արքեպիսկոպոս,
Նորին Սրբազնություն ԱԼՖՐԵԴ ՏՈՈՄԻՆԳԻՆ (Տալլին),

Միջին Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միության նախագահ,
Վերապատվելի ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ
(Բեյրութ),

Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ
Ն. ԷՐՄԻՆԻՈ ՌՈՆԿԱՐԻԻՆ (Երուսաղեմ),

ԱՄՆ-ում Քրիստոսի եկեղեցիների ազգային խորհրդի ընդհանուր քարտուղար, Գերապատիվ հայր ԷՐՈՒԻՆ ԷՍՓԻԻՆ (Նյու-Յորք),

Մոնակոյի եպիսկոպոս, Գերաշնորհ ԺԱՆ ՌՅՈՒՊԻՆ (Մոնակո),

Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ հայր
ՀՄԱՅԱԿ վարդապետ ԿԵՏԻԿՅԱՆԻՆ (Վենետիկ),

Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ հայր
ՄԵՍՐՈՊ վարդապետ ՀԱՊՈՋՅԱՆԻՆ (Վիեննա),

Վերապատվելի ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԵԼՎԱԾՅԱՆԻՆ (Մարսել):

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Մեր Տիրոջ և Փրկչի լուսափայլ հարության ավետիսով, հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցվո, խնդությամբ կշնորհավորենք Ձեզ և Ձերդ Սրբության կհղենք Մեր եղբայրական սիրո ամենահարգալի ողջույնները:

Քրիստոսի հարության շնորհներով և փրկության հույսով, թող լեցվին սրտերը մեր օրերու բոլոր մարդոց, թող բարձրանա երկնառաք լույսը աշխարհի բոլոր հորիզոններուն, բոլոր սահմաններուն վրա, թող խափանվին ուժերը չարին, խավարին, թող հաշտության ու խաղաղության շեփորներ հնչեն ժողովուրդներու կյանքի ճամփաներու վրա, այժմ և միշտ:

Սուրբ հարության ուրախությունը մեր սրտին մեջ, կաղոթենք, որ «Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առաւելով ձեզ յուսով զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Հռոմ. ԺԵ 13): Ամեն:

Սրտաբուխ բարի մաղթանքներով և սիրով ի Քրիստոս՝

ՎԱՉԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ
ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ
ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ
ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա-ԻՆ (Անթիլիաս),

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Երուսաղեմ),

ԹՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Ստամբուլ),

ԲԱՐԵԽՆԱՄ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ
ԵՎ ԳԵՐԱՊԱՏԻՎ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՆ:

Այսօր, աշխարհը համայն, երկյուղածությամբ ու ցնծությամբ վերստին կողջունե ավետիսը Քրիստոսի հարության հրաշքին, և մարդոց հոգիները բոլոր վերստին կլեցվին ջերմությամբը կենարար լույսին և փրկության հույսին:

Այսօր, աստվածաշեն Էջմիածնի սուրբ սեղաններու առաջ բազկատարած կաղոթենք որ հրաշափառ հարության շնորհները առատապես իջնեն նաև մեր սուրբ եկեղեցիին վրա, լույսով ու հույսով ջերմացնելու սրտերը մեր բոլոր հավատացյալ զավակներուն:

Զատկական ուրախությամբ կհղենք տիրախնամ Աթոռիդ միաբանության, և համայն մեր հարազատ ժողովուրդին, Մեր հայրական օրհնությունը և Մեր ամենաբարի մաղթանքները Ձերդ Սրբության բաջառողջության և արևշատության համար:

Ձեզի մեծ ավետիս՝ Քրիստոս հարյավ ի մեռելոց:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

* * *

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կենտրոնական վարչությանց և խորհուրդներին, Հայկական բարեգործական ընդհանուր միության Կենտրոնական վարչությանը (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության Կենտրոնական խնամակալությանը (Լիսաբոն), Աբգարյան ավանդի և ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), ս. Էջմիածնի հանձնախմբին (Բեյրութ), Վարդանանց ասպետներին (Ուոտերտաուն), Կալկաթայի հայկական ընկերության վարչությանը (Կալկաթա), գաղութային վարչություններին, հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի և հոգևոր ճեմարանի բարերարներին և ծանոթ ազգային դեմքերին:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետի նախաձեռնությամբ և պատվերով, Չեխոսլովակիայից ստացվեց մի մեծ երգեհոն, 62 ռեգիստրանոց՝ իբրև նվեր մայրաքաղաքիս ֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճին:

Երգեհոնը արժել է 46.000 դոլար, որի մեկ քառորդը տրամադրել է Վեհափառ Հայրապետը՝ Մայր Աթոռի միջոցներից, իսկ մնացած գումարը գոյացել է՝ հանգանակությամբ Եվրոպայում և Մերձավոր Արևելքում, գլխավոր նվիրատուն հանդիսանալով միլանաբնակ ազգային բարերար Երվանդ Հյուսիսյանը:

Նույն պատվերով և միաժամանակ ս. Էջմիածնում ստացված են երկու փոքր երգեհոններ՝ յուրաքանչյուրը 14 ռեգիստրանոց, Մայր տաճարի և Նոր Վեհարանի համար, որոնց նվիրատուներն են՝ հանգուցյալ բարերար Հեղրի Մովսիսյանը և տիար Վոլտեր Վարդանը՝ Միացյալ Նահանգներից:

Մայր Աթոռս իր հարգալիր շնորհակալությունն է հայտնում նվիրատու բոլոր ազնվասիրտ ազգայիններին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

7 փետրվարի 1970 թ.,
Ս. Էջմիածին



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ի գիտություն Հայաստանյայց եկեղեցու հոգևորական դասին և հավատացյալներին, հայտնում ենք, թե Մայր Աթոռի պաշտոնական հաղորդագրությամբ, Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից 1968-ին կարգալույծ հռչակված Սարգիս Անդրեասյանը (նախկին քահանա Երևանի ս. Սարգիս եկեղեցու) Անթիլիասի գահակալ Տ. Տ. Խորեն կաթողիկոսի կողմից մի քանի ամիս առաջ վերականգնվել է իր քահանայական կարգի մեջ և ուղարկվել Միացյալ Նահանգներ, ուր տ. Հրանտ արքեպ. Խաչատրյանը նրան նշանակել է հոգևոր հովիվ Չիկագո քաղաքում:

Հանուն ազգիս Սրբազնագույն Հայրապետի, այսու լիազորված ենք հայտարարելու, որ Անթիլիասի Գահակալը նման կանոնական որևէ իրավասություն չունի, հետևաբար Սարգիս Անդրեասյանը է՛ ու կմնա՛ կրոնական կարգից զուրկ աշխարհական անձ, որը չունի և երբեք չի ունենալու որևէ հանգամանք՝ եկեղեցական խորհուրդ կամ կարգ կատարելու:

Սույն հարցի վերաբերյալ Վեհափառ Հայրապետի հատուկ նամակը 12 փետրվար 1970 թվակիր, ուղղված Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսին, ինչպես և Մայր Աթոռիս միաբան տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի 29 դեկտեմբեր 1969 թվակիր նամակը, ուղղված Անթիլիասի Դրան եպիսկոպոս տ. Գարեգին եպս. Սարգսյանին, մնացել են անպատասխան:

Հանուն Հայոց Հայրապետի, այսու կոչ ենք անում Անթիլիասի Գահակալին և տ. Հրանտ արքեպ. Խաչատրյանին, որ ետ վերցնեն իրենց ոչ օրինական որոշումը և ընդմիշտ արգելեն Սարգիս Անդրեասյանին քահանայական պաշտոն կատարել:

Կոչ ենք անում նաև Չիկագոյի հայ հավատացյալներին, որ չճանաչեն Սարգիս Անդրեասյանին իբրև քահանա և հոգևոր պաշտոնյա Հայաստանյայց եկեղեցու:

Անթիլիասի Աթոռի կողմից նման արարքը քաջալերանք է հանդիսանում նաև այլ քահանաների՝ լքելու իրենց հոտը և հեռանալու մայր հայրենիքից:

Մայր Աթոռս խոր վշտով է արձանագրում այս տխուր պարագան, որը մի նոր փորձ է՝ հարված հասցնելու ս. Էջմիածնին, կրոնական կյանքը Հայաստանում տկարացնելու միտումով:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

12 մարտ 1970 թ.,
Ս. Էջմիածին

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Մայր Աթոռ ս. Էջմիածնի Դիվանը այսու լիազորված է ծանուցելու ի գիտություն հայ եկեղեցու նվիրապետական Աթոռներին և ազգային-եկեղեցական իշխանություններին, որ Ամենայն Հայոց Հայրապետի վճռով կարգալույծ է արվել Արարատյան թեմից տ. Հովհաննես քահանա Կարապետյանը, որը դրժել է իր ծառայության ուխտը և լքել իրեն վստահված հոտը, առանց հարգելի պատճառի և առանց հոգևոր վերին իշխանությունների արտոնության և հակառակ վերջին երեք տարիների ընթացքում բազմիցս նրան եղած հորդորներին և նախազգուշացումներին Արարատյան թեմական եպիսկոպոսի և Մայր Աթոռի Գերագույն հոգևոր խորհրդի կողմից:

Վերոհիշյալ կարգազուրկ քահանան դասվում է աշխարհականների շարքը՝ իր նախկին Հովհաննես Կարապետյան անունով:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

14 մարտ 1970 թ.,
Ս. Էջմիածին

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԹԵՄԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Վեհափառ Հայրապետի հրավերով փետրվարի 18-ին Մայր Աթոռ է ժամանում տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

Նորին սրբազնությունը, հայրապետական մասնավոր կարգադրությամբ, փետրվարի 9-ին մեկնել էր Հռոմ՝ ընկերակցությամբ Նյու-Յորքից տ. Մամբրե քհն. Գուզույանի, Հռոմի եկեղեցական իշխանության ներկայացուցիչների՝ կարդինալ Վիլդբրանցի, հայր Ժերոմ Համմերի և հայր Պիեռ Դյուպրեի հետ՝ կազմելու Հայոց Հայրապետի մայիս ամսվա ընթացքում Նորին Սրբություն Տ. Պավղոս Զ Սրբազան Պապին տալիք պաշտոնական այցելության ծրագիրը:

Հայրապետական պատվիրակ սրբազանը Հռոմում մնում է փետրվարի 9—12 օրերը՝ հաջողությամբ ավարտելով իր հատուկ առաքելությունը:

Նորին Սրբություն Տ. Պավղոս Զ Պապը բարեհաճել է հատուկ ունկընդրություն շնորհել Մայր Աթոռի պատվիրակությանը՝ տ. Սերովբե արքեպիսկոպոսին և տ. Մամբրե քահանային:

Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը փետրվարի 18-ին ժամանում է Մայր Աթոռ՝ անձամբ զեկուցելու Հայոց Հայրապետին՝ Հռոմ կատարած իր ուղևորության արդյունքների մասին ու Նրա համաձայնությանը ներկայացնելու Վատիկան այցելության ծրագիրը:

Տ. Սերովբե արքեպիսկոպոսը փետրվարի 25-ին հրաժեշտ է առնում Հայոց Հայրապետից և վերադառնում Փարիզ՝ իր թեմը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(1970 թ. մարտի 29)

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց»:

Քրիստոսի Հարության ավետիսը իբրև փրկարար լույս, կշողա այսօր մեր հուսացյալ հոգիներուն վերև: Զարթոնքի զգացում մը կհամակե մեր էությունը ամբողջ: Կլեցվինք քաղցր հույզերով, զվարթարար խոհերով: Ծամփաներ կբացվին դեպի մյուս ափը կյանքին, դեպի կատարները փրկության հույսին, հավերժության տեսիլքին:

Տեսիլք փրկության ու հավերժության, ահա մարդը: Մարդը բոլոր ժամանակներու, անցյալ ու գալիք:

Տեսիլք փրկության ու հավերժության, ահա գոյության իմաստը և փառքը կյանքին, խորհուրդը մարդոց և ժողովուրդներու ստեղծարար ճիգերուն, մաքառումներուն, իրագործումներուն:

Տեսիլք փրկության ու հավերժության, ահա և վեմը, որուն վրա մարդը, կնքած է իր ուխտը Աստուծո հետ: Եվ ահա թե ինչու, ան չի կրնար ապրիլ երբեք առանց Աստուծո:

Քրիստոս ինքը, Ավետարանն իսկ է փրկության ու հավերժության:

«Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զՈրդին իւր Միածին ետ. զի ամենայն որ հաւատայ ի նա, մի կորիցէ, այլ ընկալցի զկեանս յաւիտենականս» (Հովհ. Գ 16):

Նույն այդ տեսիլքով, Աստուծո հետ իր ուխտը կնքեց նաև մեր փոքր ածուն ի Հայաստան աշխարհ, սուրբ գրական Արարատի ստորոտին, և պատմության լայն հորիզոնին վրա բարձրացուց իր հավատքի բերդը՝ Հայաստանյայց եկեղեցին, Մայր Աթոռ սուրբ Էջմիածնով. ապրեցավ քրիստոնեական

ոգեկանությունը իր ուրույն փորձառությամբ, կերտեց պատմությունը իր կյանքին, ստեղծեց գանձարանը իր ինքնատիպ մշակույթին:

Հայաստանյայց եկեղեցին, հայոց պատմությունն ու հայ մշակույթը, լուսավոր ճանապարհ կհանդիսանան մեր ազգի փրկության ու հավերժության:

Հոգևոր զավակներ Մեր հարազատ, զավակներ Մեր ցանկալի, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, նայեցեք Հիսուսի դատարկ գերեզմանին և հավատացեք Հարության հրաշքին: Հավատացեք որպեսզի միշտ վառ մնա լույս կանթեղը Արագածի կատարին, որպեսզի միշտ դեպի վեր սլանա հայկյան հանճարը արարչագործ, որպեսզի հայոց երկնակամարին վրա միշտ ազատ ու պայծառ շողան աստղերը անմահության հույսին:

Դուք, այսօր ապրող հայեր, մանավանդ դուք, պանդուխտ զավակներ Մեր, որպեսզի չտկարանաք ու չշփոթվիք, որպեսզի չթափառիք կորստյան ճամփաներու վրա, ձեր հայացքը ուղղեցեք դեպի անցյալը մեր եկեղեցիին ու ազգին, և սորվեցեք ճանչնալ ու հասկնալ հոգին մեր մեծագործ հայրապետներուն, մեր շնորհակիր վարդապետներուն, լույս բաշխող մեր հանճարներուն և հայրենիք կերտող մեր հերոսներուն: Այդպես է որ դուք պիտի ճանչնաք ու հասկնաք ձեր իսկ հոգին, ձեր ինքնությունը, ձեր գոյության իմաստը և ձեր առաքելության խորհուրդը այս աշխարհի վրա: Հայաստանյայց եկեղեցին, ի սկզբանե եղած է ու մինչև մեր օրերը մնացած, միշտ սուրբ Էջմիածնով, քրիստոնեական հավատքի ամենավավերական ու ամենաստեղծարար փորձառություններեն մին, իսկ հայոց պատմությունը՝ հերոսական դյուցաներգություն մը՝ վասն Հիսուսի և վասն հայրենյաց ազատության: Դարերը կտակեցին մեզի Քրիստոս մը՝ փրկիչ հոգիներու և պաշտպան հայրենյաց:

Այսօր, երբ բովանդակ քրիստոնյա աշխարհին հետ միասիրտ ու միահույս, կփառաբանենք հրաշափառ Հարությունը մեր Տիրոջ և Փրկչին Քրիստոսի, այս խոհերը կարթննան մեր գիտակցության մեջ մանավանդ այս տարի, վասնզի հառաջիկա ամիսներուն՝ պիտի պատրաստվինք ոգեկոչելու՝ հիշատակը մեր եկեղեցվո երեք երախտավոր դեմքերու, որոնք կպատկանին ստեղծարար ու հերոսական հայ հոգևորականներու հույլին, որոնք իրենց ժամանակին, մարմնավորած են մեր քրիստոնեական լույս հավատքը և ոգին հայրենյաց, զմայլանքի արժանի իրենց կյանքով ու գործով:

Անոնցմե առաջինը՝ Առաքել վրդ. Դավրիժեցին է, որուն մահվան երեքհարյուրամյակը կլրանա այս տարի:

Երկրորդը՝ Ներսես Ե կաթողիկոս Աշտարակեցին, որուն ծննդյան երկուհարյուրամյակն է այս տարի, իսկ երրորդը՝ Մկրտիչ Ա կաթողիկոս, Խրիմյան Հայրիկը, որուն ծննդյան հարյուր և հիսուն տարին է որ պիտի դիմավորենք նույնպես այս տարի:

Երջանիկ զուգորդությամբ, 1970-ը կհանդիսանա այս երեք մեծագործ եկեղեցական հայրերու հիշատակության տարի:

Թեև մեկը մյուսեն շուրջ մեկական դար հեռավորության վրա, սակայն, անոնք երեքը միասին կկազմեն մեկ ամբողջություն, մեկը մյուսին գործը շարունակող, մեկը մյուսով ամբողջացող, միևնույն եկեղեցաշեն ու հայրենանվեր առաքելության ճանապարհի վրա:

Երեքն ալ հավատքով զորացած և իրենց ժողովուրդին նվիրված հոգեվորականներ:

Երեքն ալ ժիր մշակներ դպրության, հոգիներ լուսավորող, հոգիներ կերտող:

Երեքն ալ անբաժանելի՝ հայրենի հողեն ու հացեն, այդ հողին ու հացին պաշտպան մարտնչողներ՝ Ղևոնդյանց ու Վարդանանց ոգիով:

Մենք որոշած ենք հրավեր կարդալ մեր եկեղեցվո նվիրապետական Աթոռներուն, մեր բոլոր եկեղեցիներուն, և համայն մեր հավատացյալ ժողովուրդին ի Հայաստան և արտասահման, որպեսզի հառաջիկա մայիսին, սեպտեմբերին և դեկտեմբերին արժանի հանդիսավորությամբ տոնախմբվի անմոռաց հիշատակը այս մեծանուն եկեղեցական գործիչներուն:

Հատկապես այս տարի, առավել նշանակալից և ոգեշնչող կդառնան այս հիշատակությանց հանդիսությունները, որովհետև կզուգադիպին մեր մայր երկրի վերածննդյան հիսնամյա հոբելյանին: Ինչքա՜ն խորհուրդ կա այս իրողության մեջ, և ինչքա՜ն մխիթարություն մեզի բոլորիս համար:

Եվ մանավանդ, ինչքան պիտի հրճվին այսօր, հայու սիրտ կրող բոլոր հայերը, որ մեծանուն հայ հոգևորականներու հիշատակը պիտի փառավորե՝ ոչ թե նահատակ, այլ կենսուրախ ու աճող, նոր կյանք ու ապագա կերտող ժողովուրդ մը, ո՛չ թե թշվառ ու անտեր, այլ խաղաղ ու ապահով, իր ճակատագրին տերը դարձած ինքնավար հայրենիք մը, ո՛չ թե ավերակներու վրա ողբացող, այլ լույսի ու երգի մեջ պերճազարդ, գալիք օրերու պայծառ տեսիլքով հպարտ՝ Մայր Հայաստան մը:

Ամենայն հայոց մայր հայրենիքի վերածնունդի հիմքերուն մեջ, անջնջելի կերպով քանդակված են անունները նաև՝ Խրիմյան Հայրիկին, Ներսես Աշտարակեցիին և Առաքել Դավրիժեցիին: Արդի՝ աճող ու ծաղկող Մայր Հայաստանը, իրականացած երազն է մեր լուսաբնակ հայրերուն:

Փա՜ռք անոնց հիշատակին:

Փա՜ռք մեռելներեն հարություն առած մեր ժողովուրդին:

Փա՜ռք հրաշափառ Հարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Ամեն:



ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 1-ին, կիրակի.—Դ կիրակի բառասնորդական պանոց. Տնտեսի.

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Հակոբ քհն. Հակոբյանը։

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Գեղարդի վանքի վանահայր տ. Նարեկ վրդ. Շաքարյանը՝ «Տուր զհամար տնտեսութեան քո» բնաբանով։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Մարտի 8-ին, կիրակի.—Ե կիրակի բառասնորդական պանոց. դատաւորին.

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Նշան քհն. Բեյլերյանը։

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Գեվորգ վրդ. Սերայդարյանը՝ «Պարտ է յամենայն ժամ կալ յաղօթս և մի ձանձրանալ» բնաբանով։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Մարտի 13-ին, ուրբաթ.—*Երեկոյան ժամը 19-ին Երևանում, Հայրապետական վիլլայում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը։*

* * *

Մարտի 14-ին, շաբաթ.—Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մեռոյ սոսկալի շարչարանացն և մտին ի Վիրապն.

Մայր տաճարում, Իջման սեղանի առաջ, ս. պատարագ մատուցեց տ. Մկրտիչ ավագ քհն. Մկրտչյանը։

Նույն օրը, կեսօրից հետո ժամը 14-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվեց Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի հերթական նիստը՝ քննության առնելու համար 1970 թ. Մայր Աթոռի շինարարական աշխատանքների ընթացքը։

* * *

Մարտի 21-ին, շաբաթ.—*Այսօր, երեկոյան ժամը 18-ին, հոգևոր ճեմարանի հանդիսասրահում դասախոսություն է կարդում հոգևոր ճեմարանի գրաբարի դասախոս Ս. Անթոսյանը՝ «Հայ մշակույթի համաշխարհային արժեքը» նյութի շուրջ։*

Դասախոսությանը ներկա են Մայր Աթոռի միաբանությունը և հոգևոր ճեմարանի ուսանողությունը։

* * *

Մարտի 22-ին, կիրակի.—Ծաղկազարդ.

Այս հանդիսավոր տոնի առթիվ Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը։

«Հայր մեր»-ից առաջ հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Շնորհք վրդ. Գասպարյանը քարոզում է «Ռաբբի՛, դու ես որդի Աստուծոյ, դու ես թագաւոր Իսրայելի» բնաբանով։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Նույն օրը, երեկոյան ժամը 17.30-ին, Մայր տաճարում կատարվում է «Դոնբաց էք»-ի հանդիսավոր արարողություն՝ Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ։

ԱՐ 128949

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՄԻԱՑՅԱԼ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 25-ին, չորեքշաբթի օրը, որպես տուրիստներ, Մայր Աթոռ ժամանեցին բրիտանական և օտար Ս. Գրոց միացյալ ընկերությունների ներկայացուցիչներ կանոնիկոս Ռ. Վ. Ֆ. Վուտտոնը և դոկտ. Վիլլըմ Դ. Ռիբբրնը, որոնք Մայր տաճարում իրենց աղոթքը կատարելուց հետո, Վեհարանում ընդունվեցին Հայոց Հայրապետի կողմից:

Ժամը 16-ին Վեհարանում, ի պատիվ հյուրերի, տրվում է բարի գալստյան ճաշկերույթ, որին մասնակցում են նաև տ. Սերովբե, տ. Հուսիկ սրբազանները, տ. Շնորհք, տ. Նարեկ վարդապետները, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը և Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Շահբազյանը:

Այնուհետև, ժամը 18-ին, Վեհարանում Հայոց Հայրապետի և հարգելի հյուրերի միջև տեղի է ունենում զրույց Ս. Գրոց միացյալ ընկերությունների գործունեության և ապագա ծրագրերի շուրջ:

Փետրվարի 26-ին և 27-ին հարգարժան հյուրերը այցելում են ս. Գեղարդ, Գառնի, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան և ապա՝ մայրաքաղաքի տեսարժան վայրերը:

Փետրվարի 27-ին, ուրբաթ օրը, ժամը 13-ին, Վեհարանում Ս. Գրոց միացյալ ընկերությունների ներկայացուցիչներ կանոնիկոս Ռ. Վուտտոնը և դոկտ. Վիլլըմ Դ. Ռիբբրնը մասնավոր տեսակցություն են ունենում տ. Հայկազուն արքեպիսկոպոսի և վերջերս Մայր Աթոռում չորս Ավետարանների և Գործք առաքելոցի արևելահայերենի նոր թարգմանությունը կատարած Ա. Հատիտյանի, Պ. Շահբազյանի և Ս. Անթոսյանի հետ՝ ծանոթանալու համար կատարված թարգմանության մեթոդին և սկզբունքներին:

Ջերմ զրույցի ընթացքում տեղի է ունենում ներկաների միջև մտքերի աշխույժ և հետաքրքրական փոխանակություն, Մայր Աթոռ ս. Էջմիածնի և Ս. Գրոց միացյալ ընկերությունների կենտրոնի համագործակցության և Աստվածաշնչի արևելահայերեն և արևմտահայերեն նոր թարգմանությունների և հրատարակությունների մասին:

Ժամը 17-ին հարգարժան հյուրերը այցելում են հոգևոր ճեմարան, ուր տեսուչ տ. Շնորհք վրդ. Գասպարյանը անգլերեն լեզվով իր ուղերձում ողջունում է Ս. Գրոց միացյալ ընկերությունների ներկայացուցիչ-

ներին, հաջողություն մաղթելով նրանց գործունեությանն ու առաքելությանը:

Հոգևոր ճեմարանի սաները, ի պատիվ հյուրերի, կատարում են հայերեն և անգլերեն լեզուներով շարականներ և հոգևոր երգեր:

Վերջում կանոնիկոս Վուտտոնը և դոկտ. Ռիբբրնը խոսք առնելով ջերմ շնորհակալություն են հայտնում նախ Ամենայն Հայոց Հայրապետին՝ բացառիկ և ջերմ ընդունելության և հյուրասիրության, ապա հոգևոր ճեմարանի հարկի տակ այս հանդիպման համար դասախոսական կազմի և ուսանողության հետ:

Այնուհետև հարգարժան երկու հյուրերը ուսանողությանը խոսում են իրենց գործունեության և դժվարին, պատասխանատու, բայց և շնորհակալ աշխատանքների մասին:

Փետրվարի 28-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, Ս. Գրոց միացյալ ընկերությունների ներկայացուցիչները հրաժեշտ են առնում Մայր Աթոռից և Հայոց Հայրապետից երախտագետ զգացումներով և անմոռաց տպավորություններով ու վերադառնում իրենց պաշտոնատեղին:



ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ

ՀԱՅ ԱՅՆԹԱՊԸ ԵՎ ԻՐ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Այս տարի ապրիլի 1-ին լրանում է Այնթապի հերոսական ինքնապաշտպանության հիսուն տարին:

Հայրենաբնակ այնթապցիները և սփյուռքի ողջ տարածքի վրա ապրող այնթապցիությունը որոշել են շքեղ հանդիսություններով և ազգային հպարտության քաղցր զգացումներով նշել այդ հիշարժան և հավետ անմոռանալի տարեթիվը թե՛ մայր հայրենիքում և թե՛ արտասահմանում՝ որպես համաժողովրդական ցնծության և փառաբանության տոն:

Այնթապի հերոսամարտը հանդիսանում է մեր ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի դարավոր տարեգրության փառավոր և հերոսական էջերից մեկը:

Այս առիթով Այնթապի բովանդակ հայության արտագին երազն ու ցանկությունն է՝ իր ծննդավայրի պատմական անունն ու նվիրական հիշատակը հավերժացած տեսնել մեր վերածնված մայր հայրենիքում՝ Սովետական Հայաստանում, մշակութային, գիտական մի կարևոր ձեռնարկի իրականացումով, որպես անմոռաց հուշարձանը հերոսամարտի: Այս հայրենասիրական ձեռնարկի հաջողության համար կատարված է պաշտոնական դիմում սփյուռքի Ա. Ա. Հայրենակցական Միության կենտրոնի կողմից, և մեր հայրենի բարեխնամ կառավարության համապատասխան իշխանություններն արդեն իսկ հայտնել են իրենց համամտությունը:

Մեծ խորհուրդ կա, արդարև, հայրենասիրական նման նախաձեռնությամբ, բռնագրավված մեր հայրենական ծննդավայրի անունն ու հիշատակը հայրենի հողի վրա վերապրեցնելու մեջ:

Չկա հայ Այնթապը, բայց կա Այնթապի հայոց պատմությունը՝ **Այնթապի պատմագիրքը,** երկու հատորով, տպագրված ԱՄՆ-ում, 1953 թվականին, 1894 էջ, ինչպես նաև՝ նույնի **անգլերեն համառոտագրությունը,** տպագրված ԱՄՆ-ում, 1957 թվականին, 327 էջ:

Այնթապի հայն էլ «մեր տոհմիկ տարեգրության մեջ» ունեցել է իր առանձնահատուկ տեղը, ինչպես կեսարացին, պոլսեցին, վանեցին:

«Քաղաքներ կան,—գրում է մեծանուն գրագետ Թորգոմ պատրիարք Գուշակյանը,—որոնք չեն գիտեր ի՛նչ մը ունին ինքնահատուկ և հասարակաց դրոշմով մը կնքելու համար իրենց քաղաքացիները, իրենց մեջ ապրին անոնք թե իրենցմե դուրս: ...Այսպես է որ Պոլիսն ու պոլսեցիները, Վանն ու վանեցիները, Այնթապն ու այնթապցիները և այլն ճանչցող մը կրնա առանց դըժվարության ըմբռնել պոլսեցիներուն, վանեցիներուն, այնթապցիներուն մտապատկերները՝ իբր ընդհանուր գաղափարներ» (Ա. Ալպոյաճյան, «Պատմություն հայ Կեսարիոյ», Հառաջաբան, Ա հատոր, էջ Բ):

Այնթապցի հայի նկարագրի տոհմիկ և ցայտուն հատկանիշներն ու գծերը են ավանդապահությունը, ընտանեկան ամուր բարոյականը, մաքրասիրությունը, ուշիմությունը, աշխատասիրությունը, կրթության և հառաջդիմության բնածին ձգտումը, զվարթամտությունը, կրոնազգաց հոգին, ձեռներեցությունը, հանդուրժողությունը, էկումենիկ ոգին, մտավորական լայն հետաքրքրությունները, համարձակությունը և ազատասիրությունը:

Այնթապ քաղաքի պատմությունը շատ հին չէ: Օտար և հայ պատմական աղբյուրներում Այնթապը հիշատակվում է ԺԲ դարից որպես «Մեծն, անուանի և անառիկն Անթապ»: Քաղաքի հայ ազգաբնակչության կորիզը կազմել է Անիի գրավումից հետո (1064 թ.) և Էրզրումի նահանգի (վիլայեթ) Անթեպ համանուն գավառից գաղթած հայությունը: Հետագայում առևտրական նպատակներով այստեղ են հաստատվում Արևմտյան Հայաստանի այլ գավառներից և Պարսկաստանից գաղթած հայ նոր խմբեր:

Քաղաքն ունեցել է շուրջ 80.000 ազգաբնակչություն, որից 50.000-ը կազմել են թուրքերը, 30.000-ը՝ հայերը:

Այնթապի հայությունը ունեցել է իր գավառաբարբառը: ԺԸ դարի ընթացքում և ԺԹ-ի սկիզբներին, սակայն, թուրքական բռնության և հալածանքների պատճառով հայերը ստիպված որդեգրել են թուրքերենը: Մյուս կողմից՝ Այնթապի տեղական թուրքերենի մեջ ներթափանցել են հայոց լեզվի և ոճի բազում արտահայտություններ, բառեր և այլ դարձվածքներ, առածներ, առակներ և հանելուկներ: Այնթապի բարբառը կիլիկյան հայ բարբառի մեկ ճյուղն է, որի բառապաշարը ուսումնասիրվել է հանգամանորեն:

Հակառակ թուրքական դաժան լծի և բռնությունների, ի գին նահատակության և մեծ զոհողությունների, 1600-ական թվականներից սկսած Այնթապի հայությունը կարողացել է կազմակերպել իր ուրույն կրոնական-եկեղեցական-ազգային կյանքը, որպես համայնք: Հիմնել է իր եկեղեցին, որի հովանու տակ պահել է իր գոյությունը, իր հավատն ու ազգային նկարագիրը, և ուր գրվել են բազում արժեքավոր ձեռագրեր, կրոնական, փիլիսոփայական, աստվածաբանական բովանդակությամբ, ունեցել է թեմական առաջնորդն ու թեմական կազմակերպությունը և ապրել՝ բարգավաճ հոգևոր-եկեղեցական կյանքով: Դրա պայծառ վկայությունն այն է, որ Այնթապի հայ բարձրաստիճան հոգևորականներից ոմանք բարձրացել են նույնիսկ կաթողիկոսական գահի վրա թե՛ ս. Էջմիածնում և թե՛ Սսում, ինչպիսիք են՝ Հովհաննես Դ կաթողիկոսը՝ Կիլիկիայի (1602—1621), Եղիազար Այնթապցին (1682—1691), Պետրոս Քյություրը (1748—1749)՝ Էջմիածնի, և մեր օրերին Բաբգեն Ա աթոռակից կաթողիկոսը՝ Անթիլիասի կիլիկյան Աթոռի վրա (1931—1936):

Այնթապի հայության հոգևոր-եկեղեցական-մշակութային-ազգային կյանքը իր նոր ու ներույժ զարթոնքն ապրել է մանավանդ Ազգային սահմանադրությունից (1860) հետո:

Այդ հոգևոր զարթոնքի արտառուչ արտահայտությունն է հանդիսանում

Այնթապի հայոց ս. Աստվածածին Մայր եկեղեցու շինությունը: Ճարտարապետական հրաշալի մի կառույց՝ շինված սև ու սպիտակ մարմարից, գրանիտից, որն իր մեծությամբ առաջինն է համարվում Թուրքիայի հայ եկեղեցիների մեջ: Կառուցվել է 1873—1893 թվականներին, Այնթապի ժողովրդի համայնական աշխատանքով, զոհողությամբ և բարեպաշտությամբ: Եկեղեցու ճարտարապետը եղել է Սարգիս Բեյ Պալյանը՝ արքունի ճարտարապետը Կ. Պոլսում: Այդ հոյակապ եկեղեցու շինության արտոնությունը ձեռք է բերել բազում դժվարություններով Ներսես պատրիարք Վարժապետյանը:

Հուզիչ է արձանագրել, որ այդ նազելի, պայծառ ու վայելուչ եկեղեցու կառուցման համար ամեն այնթապցի իր արտագին մասնակցությունն է բերել: Տղամարդիկ «հայկաբար» իրենց ուսերի վրա մարմար ու գրանիտ են բերել, «փափկասուն կանայք» իրենց փեշերով հող ու ավազ են կրել, և գիծ առ գիծ, կամար առ կամար բարձրացել է հայ աղոթքի տունը՝ իր գեղեցիկ գմբեթի ոսկեզօծ խաչով և երկնասլաց զանգակատնով, իշխելով ողջ քաղաքի համայնապատկերի վրա՝ որպես վկայությունն ու հաղթանակը հայ հավատքի: Հայ ճարտարապետության այդ թանկագին գոհարը այժմ բանտի է վերածված: Զարմանալի է, բանտի մեջ՝ բանտ...:

Այնթապում առաջին հայկական դպրոցը բացվել է 1815—1817 թվականներին: 1860 թվականին, իր տեսակի մեջ առաջինը, Այնթապո՛ւմ է բացվել աղջկանց վարժարանը:

Մինչև 1913 թվականը հայ վարժարանների թիվը Այնթապում հասել է 17-ի, 2600 աշակերտությամբ: Այդ դպրոցների մեջ հայտնի են իրենց փայլուն և արդյունավետ գործունեությամբ Վարդանյանը, Ադենականը, Հայկազյանը, Ներսիսյանը, Կիլիկյան ճեմարանը (մանչերի), Հայկանուշյանը, Հռիփսիմյանը, կրթասիրացը (աղջիկների) և այլ բազում դպրոցներ:

Այնթապի մշակութային-կրթական-մանկավարժական զարթոնքում մեծ դեր է կատարել նաև Այնթապի կենտրոնական կոլեջը: Այնթապի բոլոր կրթական հաստատությունները ապահովված են եղել դասախոսական բարձրորակ, նվիրյալ և իրենց կոչման բարձրության վրա գտնվող մասնագետ, որակյալ ուսուցիչներով և պրոֆեսորներով:

Պետք է արձանագրել գոհունակությամբ, որ Այնթապի հայության ծոցում ևս թեև եղել են հարանվանական տարբերություններ, բայց այնթապցին ընդհանրապես ունեցել է կրոնական լայն ներողամտության ոգի: Կողք-կողքի սպրել, ստեղծագործել են դավանական հողի վրա «մրրկավ բաժնված» եղբայրները՝ ընդհանուրի բարօրության և կրթական գործի հաջողության համար, էկումենիկ ոգով, եղբայրական սիրով և համերաշխությամբ:

Օտար ճանապարհորդները Այնթապը, իր բարգավաճ կազմակերպված հոգևոր-եկեղեցական-մշակութային-կրթական այս գործունեության համար, կոչել են, արդարորեն, **Կիլիկիայի** կամ Անատոլիայի **Աթենքը:**

Մինչև 1915 թվականը Այնթապի հայությունը ևս շարունակում է ապրել իր խաստումնալից հոգևոր-մշակութային զարթոնքը, հակառակ 1895 և 1909 թվականների ջարդերի:

1915 թվականի ապրիլին երկինքը փուլ եկավ ինչպես ողջ արևմտահայության, այնպես էլ Կիլիկիայի և Այնթապի հայության վրա:

Այնթապի հայությունը ևս ապրեց իր արյունոտ Գողգոթան, և մեր զարթոնքը խեղդվեց արյան մեջ: Ունեցանք մեր նահատակները, որոնք ընկան «վասն Յիսուսի և վասն հայրենեաց» անհավասար մարտում: Ունեցանք մեր նոր և սուրբ Հռիփսիմեներն ու Գայանեները, որոնք իրենց մարմինները սըր-



Այնթապի հայոց ս. Աստվածածին Մայր եկեղեցին

տառուչ համարձակությամբ և արիությամբ հանձնեցին Եփրատի ալիքներին՝ փրկելու համար իրենց պատիվը. գահավիժեցին անդունդներն ի վար՝ բարձր պահելով մեր ընտանեկան սրբությունները, և եղան «անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի և զոհք փրկութեան հայոց աշխարհին»:

Եղեռնից առաջ 30.000 էր հաշվվում Այնթապի հայության թիվը: Վերադարձավ 17.000-ը՝ վիրավոր, արյունաքամ, բայց արի ու հուսալից՝ ապրելու և ստեղծագործելու սրտառուչ հավատքով առլցուն:

Եղեռնից վերապրողները սկսեցին վերաշինել իրենց քանդված օջախները, բուժել իրենց վերքերը և ոտքի կանգնել:

1917—1920 տարիները եղան հայրենաշինության դժվարին, բայց խոստումնալից տարիներ: Այնթապցին իր նահատակությունը վերածեց հաղթանակի, իր Գողգոթան՝ ազգային վերածննդի:

Երկար չտևեց, սակայն, ազգային վերակենդանության այդ ուրախությունը: Դարավոր թշնամին ուխտադրժորեն և դավադրաբար հարձակվեց 1920 թվականի ապրիլի 1-ին խաղաղ և ստեղծագործ աշխատանքի լծված հայ Այնթապի վրա: Սկսվեց անհավասար մարտը: Այնթապի հայությունը ոտքի կանգնեց միասիրտ ու միակամ, առանց դավանական, քաղաքական տարակարծությունների, և վճռեց պաշտպանել իր կյանքն ու պատիվը, իր մշակույթն ու հավատը անօրենների դեմ. **«Քաջութեամբ միայն մեռցուք ի վերայ աշխարհիս մեր և ի վերայ ազգիս մեր և մի տեսցեն աչք մեր կոխան ոտից պղծալից լեալ զՍրբարանս մեր... Եւ յարութիւնս քաջութեան վատութիւն մի խառնեսցուք»:**

Բռնության, չարության և ատելության դեմ մղված Այնթապի ազգային-ազատագրական պայքարը, հերոսամարտը հմտորեն ղեկավարում էր ժողովրդի կողմից ընտրված Ազգային Միությունը:

Շուրջ մեկ տարի տևեց հերոսամարտը՝ 1920 թ. ապրիլի 1—1921 թ. փետրվարի 8: Անարգ թշնամին, հակառակ իր ռազմական ուժի գերազանցությանը, ընդունեց իր պարտությունը և անձնատուր եղավ փետրվարի 9-ին:

Այնթապի հերոսամարտում զոհվեցին շուրջ 100 այնթապցիներ: Թշնամու կորուստը եղավ շատ մեծ: Ըստ պաշտոնական թուրքական հաղորդագրության՝ ավելի քան 4000, իսկ անպաշտոն վկայությամբ՝ 8.282 հոգի:

Կիլիկիայում գտնվող ֆրանսիական զինվորական իշխանությունները Այնթապի հերոսամարտը անվանեցին **«Կիլիկյան** կամ Անատոլիայի **Վերտեռն»:**

Այնթապի հերոսամարտի մասին նրանք հրատարակեցին հետևյալ երեք կարևոր ֆրանսերեն աշխատությունները, բարձր գնահատելով այնթապցիների հերոսությունն ու արիությունը և նրանց մղած ազատագրական պայքարի արդարացիությունը.

1. Այնթապի չորս պաշարումները, ռազմական գործողություններ Արևելքում, 1920—1921, լեյտենանտ-Գոլոնել Բր. Մ. Աբադի, Փարիզ.

2. Զորասյուներ Արևելքում, Ռոբերտ Նորման, Փարիզ.

3. Կիլիկիայի Գողգոթան, 1919—1922, Պոլ Դյու Վեու, հառաջաբանը գեներալ Բրեմոնի, Փարիզ:

Կարճ տևեց, սակայն, հաղթական այնթապցիների ուրախությունը: Նոր հուսախաբություններ, ավելի ծանր դառնություններ էին սպասում Կիլիկիայի և Այնթապի հայությանը:

Մարտի դաշտում իր քաջությամբ, իր արյունով և կյանքով ինչ շահել էր Այնթապի հայությունը, կորցրեց դիվանագիտական սեղանների վրա:

Կիլիկյան Հայաստանի, այդ թվում նաև՝ Այնթապի հայությունը միջազգային դիվանագիտական շուկաներում 1921 թվականի մարտին լոնդոնյան համաձայնությամբ վաճառվեց «բարեկամ» և «դաշնակից» եվրոպական պետությունների կողմից երեսուն արծաթի:

Ֆրանսիացիները լքեցին Կիլիկիան: Ողջ հայությունը, այդ թվում նաև՝ Այնթապի հայությունը, վիրավոր սրտով, դավաճանված ու հուսահատ, ձեռք առավ գաղթականի ցուպը՝ «զօրէն մոլորական աստեղաց» և փշրված, բայց թանկագին ադամանդների նման սփռվեց աշխարհով մեկ՝ իր սրտում անմեռ պահած անունն ու հիշատակը ցանկալի Կիլիկիայի և Այնթապի:

Սփյուռքում անցնող 50 տարիների ընթացքում նորից ոտքի կանգնեց Այնթապի հայությունը: Տուն-տեղ եղավ: Եկեղեցիներ կառուցեց, դպրոցներ հիմնեց և սկսեց նորից ապրել և ստեղծագործել:

1946 թվականին, երբ հայրենիքը իր մայրական գիրկը բացավ տարագիր և պանդուխտ սփյուռքի իր զավակների առաջ, այնթապցիները առաջիններից եղան, որոնք մի անգամ ընդմիշտ թոթափեցին օտարության և պանդխտության փոշին իրենց ոտքերից և եկան վերածնված հայրենի հողի վրա վերակառուցելու իրենց քանդված բույնը և ապրելու ապահով ու խաղաղ, բարօր ու երջանիկ՝ հարազատ պետության բարեխնամ հովանու ներքո:

Այսօր մայր հայրենիքում ապրում են ավելի քան 6.000 այնթապցի հայրենադարձ հայեր, որոնց թվում անվանի մարդիկ՝ գիտության, արվեստի, գրականության, մանկավարժության բնագավառներում, նաև՝ շնորհալի արհեստավորներ, որոնք իրենց ստեղծագործ ու շինարար քրտինքն են խառնել հայոց վերածնված հայրենիքի նվաճումներին և վայելում են հարազատ պետություն, հայրենիք ունենալու երջանկությունն ու ապահովությունը:

Սովետական Հայաստանն է բովանդակ հայության խաղաղության նավահանգիստը, ապահովության ամրոցը, մեր ազգային իդեալների ջահակիրն ու դրանք իրականացնողը, հայ մշակույթի պաշտպանն ու հովանավորողը, մեր կյանքը, մեր ապագան:

Այս է նաև սրտագին հավատը Այնթապի ողջ հայության:

Վերածնված մայր հայրենիքում պատմական Այնթապի անունն ու հիշատակը հավերժացնելու հարցը բոլոր այնթապցիների պատվի, խղճի և հայրենասիրության սրբազան խնդիրն է, որի իրականացման ճանապարհի վրա պետք չէ կանգ առնել բարոյական ու նյութական ոչ մեկ զոհողության առաջ:

Մեր նահատակները մեռան, որ մենք ապրենք և ապրեցնենք նրանց հիշատակն ու գործը վերածնված մեր հայրենիքում:

Փա՛ռք մեր բոլոր նահատակներին, որոնք ընկան «վասն Յիսուսի և վասն հայրենեաց» հերոսական պայքարում, հայ ժողովրդի ազգային-ազատագրական մարտերում:

Փա՛ռք մեր վերածնված մայր հայրենիքին՝ Սովետական Հայաստանին:

ՊԱՐԳԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ
(Առաջնորդ Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասի)

ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՑ ԱՐՔՈՒՆԻՔԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1796 թվի նոյեմբերի 7-ին, ուղղակի Եկատերինա II կայսրուհու մահվան հաջորդ օրը, նոր գահակալ Պավել I-ը խստիվ հրաման տվեց պարսկական արշավանքի գլխավոր հրամանատար գեներալ Վալերիան Զուբովին՝ անհապաղ դադարեցնել պատերազմական գործողությունները և զորքերն Անդրկովկասից վերադարձնել Ռուսաստան[1]:

Հայերը, վրացիները, ադրբեջանցիները և կովկասյան մյուս ժողովուրդները, որոնք մեծ հույսեր էին կապել այդ արշավանքի հետ, որը պետք է ազատեր նրանց պարսկական անարգ լծից, ռուսաց զորքերի ետ քաշվելուց հետո ծանր դրության մեջ ընկան՝ գտնվելով Աղա Մահմեդ խանի նոր արշավանքի սպառնալիքի առջև[2]:

Պարսկական արշավանքի անակնկալ խափանումն առանձնապես մեծ վիշտ է պատճառում երջանկահիշատակ Ղուկաս Կարնեցի կաթողիկոսին, որ արտաքուստ անտար-

---

[1] Ռուսաստանի և անդրկովկասյան ժողովուրդների շահերին վնասակար այդ քայլը պատմաբանների կողմից տարբեր կերպով է բացատրվում: Ոմանք այն կարծիքին են, որ Պավել I-ը, հարկադրված լինելով երկար տարիներ հետու ապրել արքունիքից, չմասնակցելով պետական գործերի ղեկավարմանը, շարունակ ենթարկվելով կայսրուհու (մոր) և պալատականների սառը վերաբերմունքին և արհամարհանքին, ատելության զգացումով էր լցված դեպի մայրը և նրան շրջապատող անձնավորությունները, հետևաբար՝ գահ բարձրանալուց հետո նրա առաջին գործն է լինում դադարեցնել Եկատերինա II-ի արտաքին և ներքին քաղաքականության հետ կապված բոլոր տեսակի ձեռնարկումները:

Ոմանց կարծիքով էլ Պավել I-ը, մտադիր լինելով բոլոր ուժերը համախմբել նապոլեոնյան Ֆրանսիայի դեմ, ձգտում էր խուսափել ավելորդ ծախսերից: Հայտնի է, որ Զուբովի պարսկական արշավանքի վրա ծախսվել էր մեկ միլիոն յոթը հարյուր հազար ռուբլի (Ливанов, «Очерки из истории Азербайджана в XVIII века», стр. 188, Баку, 1948 г.), որը ժամանակին խոշոր գումար էր: Համենայն դեպս, պատճառները, որոնք դրդեցին Պավել I-ին զորքերը բերել Անդրկովկասից, բավականին հիմնավորված չեն, մանավանդ որ իր իշխանության վերջին շրջանին նա վերադարձավ մոր քաղաքականությանը. Վրաստանը նրա ժամանակ միացվեց Ռուսաստանին:

[2] Վալերիան Զուբովին հրաման էր տրված՝ «Վերականգնել Վրաստանը և Հայաստանը, ազատություն տալ Ղարաբաղի հայ մելիքներին» (Бутков, «Материалы для новой истории Кавказа с 1722—по 1803 г.», т. III, стр. 275, СПб, 1808 г.).

բեր վերաբերմունք ցույց տալով ռուսաց զորքերի Հայաստանի սահմաններին մոտենալու փաստին, նույնիսկ հայտարարելով պարսից արքունիքին, թե Զուբովի բանակում գործող ռուսահայ առաջնորդ Հովսեփի արքեպիսկոպոս Արղությանն իրեն չի ենթարկվում[3], ներքուստ սրտատրոփ ապասում էր ռուսական զորքերի Հայաստան մուտք գործելուն: Ահա թե ինչ է գրում նա Հնդկաստան՝ Շահամիր Աղա Շահամիրյանին. «...Թեպէտ ընդարձակ բացաւ դուռն այցելութեան հիւսիսոյ բարեյօժար կամեցողութեամբ երջանիկ և մեծանուն Կայսերութիւնն, և յաջողին գումարտակ զօրաց նուաճել ընդ ձեռամբ զԴուռն Երկաթ և անցեալ մինչև զԴարան դաշտ բանակեցաւ, յորոց և մասն մի եկեալ մտին ի յանձնուկ Աղուանից յամի Տեառն 1796 յամսեանն դեկտեմբերի, ընդ որս էր արիական Յովսէփ Արքեպիսկոպոսն: Ուստի յոյս եղև մեզ, թէ մերձ ընդ մերձ հուպ լիցին առ մեզ: Սակայն առ տարաբախտութեան մերոյ՝ օրհասին մահու ժամանեալ յիշեցելոյ Մեծի Կայսերութիւնն խափանեցաւ գործն օգտակարութեան աշխարհին»[4]:

Ռուսաց զորքերի ետ վերադառնալու յուրը Հովսեփ արքեպիսկոպոսը ստացավ Գյանջայում, ուր նա խաղաղությամբ մտել էր գեներալ Ռիմսկի Կորսակովի զորաբաժնի հետ միասին: Վերջինիս Զուբովը կարգադրել էր՝ Հովսեփ արքեպիսկոպոսի աջակցությամբ՝ գնալ տիրել Գյանջա քաղաք-ամրոցին, վերականգնել Ղարաբաղի հայ մելիքների անկախությունը, ամրապնդել բարեկամական դաշնակցությունը Արարատյան պատրիարքի հետ, տարածել Ռուսաստանի ազդեցությունը մինչև Արաքսի ափը[5]:

Այստեղ էլ Արղությանը լսեց մի այլ բոթաբեր լուր: Մայր Աթոռից տեղեկացնում էին իրեն, որ պարսից զորքը Աղա Մահմեդ խանի առաջնորդությամբ մոտենում է Երևանին և մտադիր է ավերել երկիրը, քանդել ս. Էջմիածնի տաճարը և Արարատյան դաշտի ամբողջ ազգաբնակչությունը քշել տանել Պարսկաստանի խորքերը:

Իրադարձությունների այդպիսի ընթացքը մի պահ ընկճում է ուժեղ և համառ կամքի տեր Հովսեփ սրբազանին: Շաբաթների խընդիր դարձող հայրենիքի ազատագրումը հետաձգվում էր անորոշ ժամանակների. այդ անսպասելի դժբախտության հետ չէր հաշտվում կրակոտ հայրենասերի եռանդուն և



Հայոց պատրիարքի գրությունը Ռուսաց կայսրին

գործունյա բնավորությունը: «Ի կարճոյ զայս և եթ ծանիր, քաղցր բարեկամ,—գրում է Հովսեփ արքեպիսկոպոսը Մինաս Լազարյանին իր այդ օրերի ապրումների մասին,—զի տիւ և գիշեր տառապիմ վասն տառապեալ ազգիս, և մտածեմ զցաւեկ անձիս ի վիշտ և ի նեղութիւն. բայց զինչ օգուտ, զի տարաբաղտութիւն ազգին ոչ ներէ նմա երջանկանալ. ժամ առ ժամ ակնկալեալ Բարձրելոյն Տեառն այցելութեանց... ի վերայ խղճալի ազգին մերոյ՝ մաշիմք և հալիմք»[6]:

Սակայն Հովսեփ սրբազանի հուսահատությունը երկար չի տևում: Տասնյոթ և ավելի տարիներ բարձր պահելով հայ ազատագրական պայքարի դրոշը, նա հաստատ համոզված էր, որ միայն Ռուսաստանի օժանդակությամբ և հովանավորությամբ հնարավոր է վերականգնել Հայաստանի

[3] **Манвел вардапет Гюмушханци**, «Записки», «Кавказская Старина», № 4 и 5, стр. 97—98, Тифлис, 1873 г

[4] Էջմիածնի արխիվ, «Օրինակք կոնդակաց Ղուկաս կաթողիկոսի», № 4501, էջ 2311—2313:

[5] **Бутков**, т. III. стр. 293.

[6] **Ա. Երիցյան**, «Թիֆլիզեցոց աղետն հարյուր տարի առաջ», «Արձագանք», № 6, Թիֆլիզ, 1897:

անկախությունն ու ապահովել նրա հարատև գոյությունը, ուստի այդ ուղղությամբ էլ շարունակում է գործել՝ հետապնդելով երկու հիմնական նպատակներ.

ա) Թույլ չտալ, որ հաջողությամբ սկսված, բայց չավարտված պարսկական արշավանքը պատճառ դառնա ռուսների օգնությամբ ազատ հայրենիք ունենալու գաղափարի թուլացմանը, որ մինչ այդ վառ էր պահվում հայ ժողովրդի սրտում:

բ) Ամենայն Հայոց կաթողիկոսի, հայ պատրիարքների և հայ ժողովրդի այլ ներկայացուցիչների կողմից Պավել I-ին ուղղված նոր խնդրագրերով վերանորոգել նախորդ գահակալներից ստացված արտոնագրերը և միաժամանակ ցույց տալ նոր ինքնակալին, որ հայ ժողովուրդը, հավատարիմ իր քաղաքական ավանդության, իր փրկությունը պարսկական և օսմանյան արյունոտ լծից ռուսաց տերությունից է սպասում:

Ծրագրային հիշյալ նպատակների իրագործումը գլուխ բերելու մտադրությամբ Հովսեփ արքեպիսկոպոսը նախ պատվեր ուղարկեց Գրիգորիոպոլ քաղաքում իրեն տեղապահ թողած Գրիգոր վարդապետ Զաքարյանին (հետագայում՝ արքեպիսկոպոս և Բեսարաբիայի հայոց առաջնորդ), որ նա, մինչև իր Ռուսաստան վերադառնալը, գնա Պետերբուրգ՝ Պավել I-ի գահակալությունը շնորհավորելու և վերահաստատել տալու այն բոլոր առանձնաշնորհումները, որ տվել էր հայերին Եկատերինա II-ը: Այնուհետև՝ նա-մի նամակով խնդրեց Ղուկաս կաթողիկոսին՝ Սիմեոն Երևանցու հայտնի կոնդակի բովանդակությամբ կոնդակ-շնորհավորագիր առաքել Պավել I-ին: Բացի դրանից, Հովսեփ սրբազանը նամակներ գրեց նաև Ռուսաստանի իրեն ծանոթ հայ և ռուս նշանավոր գործիչներին՝ ամեն տեղ շեշտելով, որ անհրաժեշտ է նոր գահակալի ուշադրությունը հրավիրել հայերի կրած անլուր հալածանքների վրա, որով թերևս հաջողվի՝ «Տէր քաղցրացուցէ զսիրտ Նորին Կայսերական Մեծութեան առ ի հաստատել զզօրս ի կողմանս և յառաջացուցանել զսկսուած ամենեարանելեաց մօրն իւրոյ ամենաբարեբար Կայսրուհւոյն, եթէ ոչ մատնեցեալ է տառապակիր ազգն մեր ի սուր և ի գերութիւն»[7]:

Հավանական է, որ Թբիլիսիում եղած ժամանակ Արղությանը հատուկ գրությամբ դիմած լինի և Երուսաղեմի հայոց պատրիարք Պետրոս Եվդոկիացուն, առաջարկելով նրան շնորհավորագիր-խնդրագիր ուղարկել Պավել I-ին: Թեև մենք Հովսեփ արքեպիսկոպոսի կողմից այդպիսի նամակ գրելու փաստ չունենք, սակայն Պավել I-ին և «Արտաքին իրաց» նախարար կոմս Ալեքսանդրին առաքված Պետրոս Եվդոկիացու գրություններ բովանդակությունից[8], ինչպես և նրանց մեջ Արղությանի անվան հիշատակումից՝ որպես Երուսաղեմի պատրիարքության կացության քաջատեղյակ անձնավորության, կարելի է եզրակացնել, որ այդ խնդրագրերը գրված են Հովսեփ սրբազանի միջնորդությամբ:

Օրմանյանը հայտնում է[9], որ Երուսաղեմի հայոց պատրիարք Հովակիմ Քանաքեռցին (1775—1793) նվիրակների միջոցով հատուկ գրություն է ուղարկել Եկատերինա II-ին (Պետրոս Եվդոկիացու գրությունների մասին Օրմանյանը տեղեկություն չունի): Ռուսաստանի Արտաքին Քաղաքականության Արխիվում, ուր պահվում են Սիմեոն Երևանցու, Ղուկաս Կարնեցու և Պետրոս Եվդոկիացու կոնդակներն ու գրությունները, Հովհաննես Քանաքեռցու գրությունը բացակայում է[10], այդ պատճառով էլ, առայժմ, Պետրոս Եվդոկիացու գրությունները Երուսաղեմի հայոց պատրիարքարանի և ռուսաց արքունիքի միջև գոյություն ունեցող հնագույն փաստաթղթերն են:

Պետրոս Եվդոկիացու պատրիարքության (1794—1800) սկզբնական շրջանին պատրիարքական Աթոռը, այլազգի զանազան մեծ ու փոքր բռնակալների խժդժություններ և դրամական քմահաճ պահանջների պատճառով, բավականին դժվարություններ կրեց:

[7] Նույնը:

[8] Архив Внешней Политики России, дело 164, л. 235, л. 238:

[9] **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան**, «Ազգապատում», էջ 3180, Պեյրութ, 1960 թ.:

[10] Երուսաղեմի հայոց պատրիարք Հովակիմ Քանաքեռցու մի նամակից հայտնի է, որ ռուս մեծ զորավար Սուվորովը պատրիարքի եղբայր Գաբրիել վարդապետի և «Ծայրագույն» նվիրակի միջոցով Երուսաղեմի հայոց Սրբոց Հակոբյանց վանքին ուղարկել է մի նկար, «Նկարեալ ձեռամբ հանճարեղ արուեստաւորին, պատուական և գոյնգոյն երանգօք» (տե՛ս ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», № 6, Երևան, 1950 թ.): Թե ինչո՞ւ Սուվորովը Երուսաղեմի հայոց պատրիարքին նվեր է ուղարկել, պատճառը հայտնի չէ, միայն կարելի է հաստատ ասել, որ այդ ձեռնարկումը կատարվել է ոչ առանց Հովսեփ արքեպիսկոպոսի գիտության, որի հարաբերությունները Սուվորովի հետ վերին աստիճանի բարեկամական էին, սկսած 1780 թվականից, երբ ռուսաց կառավարությունն անցել էր գործնական քայլերի՝ Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու հարցում, առաջիկա արշավանքի պետ նշանակելով Սուվորովին, որ հաճախակի հանդիպումներ էր ունենում Արղությանի հետ և զանազան տեղեկություններ ստանում նրանից կովկասյան ժողովուրդների, Պարսկաստանի և Թուրքիայի մասին:



Հայոց պատրիարքի գրությունը կոմս Ալեքսանդրին

Հետագայում Աթոռի դրությունը, Նապոլեոնի եգիպտական արշավանքի հետևանքով, էլ ավելի տագնապալի դարձավ: Տեղացի մահմեդականները, գրգռվելով պաղեստինաբնակ քրիստոնյաների դեմ, կողոպտեցին նրանց. վառեցին հայերի տները և մթերանոցները. հայերին մեղադրելով լրտեսության մեջ՝ գանձեցին նրանցից հարյուր քսակ դրամ: Պաղեստինից ետ քաշվող ֆրանսիական զորքերն էլ, իրենց հերթին, վնասեցին Հոպպեի վանքն ու վանատունը: Չխնայվեց նույնպես Երուսաղեմի հայոց վանքը. այստեղ էլ օսմանյան բանակի ավարառուները քարուքանդ արեցին ս. Փրկչի եկեղեցին, կտրտեցին ձիթարանն ու պարտեզները, որպես պատերազմական ծախք բռնի գումարներ կորզեցին, և բոլոր քաղաքաբնակ հայերը և վանականները «Նուազեցան ի զօրութենէ և անկան ի կարողութենէ», և Պետրոս պատրիարքը հոգոց հանելով մահ էր փափագում, հաճախ կրկնելով՝ «Բիւրիցս երանի մեռելոց որք ի Տէր ննջեցին»[11]:

[11] Օրմանյան, էջ 3186:

Ահա Երուսաղեմի հայոց պատրիարքարանի այդպիսի դառն և նեղ միջոցին, երբ ուխտավորների պակասի պատճառով վանքի եկամուտները նվազել էին, իսկ պարտքերը օրավուր աճում էին, Պետրոս Եվդոկիացին ստեղծված ծանր դրությունից դուրս գալու ուրիշ ելք չէր գտնում, քան հեռավոր Ռուսաստանում ապրող բարեկեցիկ ազգայիններին դիմելը, որոնց առատ նվիրատվություններով մտածում էր թոթափել Աթոռի պարտքերը:

Այս հույսով, ինչպես և ազգային ընդհանուր շահերին զուգակցող այլ ակնկալություններով (որոնց մասին հիշվեց վերևում), Պետրոս Եվդոկիացի պատրիարքը 1799 թվի հունիսի 5-ին շնորհավորագիր-խնդրագրեր ուղարկեց Պավել I-ին և արտաքին գործերի նախարար կոմս Ալեքսանդրին:

Ռուսաստանի Արտաքին Քաղաքականության Արխիվում պահպանվել են Պետրոս Եվդոկիացուն ուղղված Պավել I-ի հրովարտակի և «Արտաքին իրաց կանցլեր» կոմս Կոչուբեյի պատասխան գրության պատճենները[12]:

Ստորև բերում ենք երկուստեք փոխանակված գրություններն ամբողջովին:

Անպարտելի քաջայաղթ քրիստոսապսակեալ Կայսր եւ ինքնակալ Տէր Տէրանց բովանդակ Ռուսաց, եւ այլ բազում աշխարհաց եւս

ԱՄԵՆՈՂՈՐՄ ԿԱՅՍՐ,

Արփիացնցուղ լուսոյ ճանաչաւէտ ճառագայթ բարեխնամ մարդասէր քաղցրագութ բարերարութեան մեծ վայելչութեան Ձերում յաշխարհս ամենայն ծագեալ ծաւալեալ լուսապայծառ փայլէ խնամողօրէն պաշտպանութեամբ առ ի յԱստուածուստ յանձնեալ Ձեզ ի զանազան ազգաց յանթիւ բազմութեանց վերայ, ընդ որս եւ ազգի մերոյ՝ մանաւանդ ի պաշտպանութիւն Ձեր ապաստանելոց հեռաւորաց եւ մերձաւորաց: Որոց զմեծահանդէս զօր տօնէ նորապսակ կայսերութեան Ձերոյ ցնծութեամբ կատարեալ՝ և ի լսելիս մեր հոչակեցին. ապա և մեր, ի ձայն ցնծութեան, համօրէն ուխտիս եկեղեցականաց վանացս հանդիսաւոր աղօթս առ Աստուած մատուցաք բարեմաղթութեամբ եւ մատուցանեմք հանապազ:

Փափաք մեր սրտի խանդակաթ սիրոյ առ մեծ վայելչութիւն Ձեր, եւ ներողամիտ մարդասիրութիւն Սուրբ թագաւորութեան Ձերոյ առ մերազնեայս, խրախուսեալ քաջալերեցին զծառայս Ձեր համարձակիլ յայս նամակ,

[12] АВПР, дело 462, л. 251, л. 253.

որով շնորհաւորեմ զԱստուածապարգեւ սուրբ օծումն նորապսակ ծիրանածին կայսերութեան Ձերոյ:

Ահա ի նշան մտերիմ մեր ծառայութեան եւ կաթոգին սիրոյ կայսերական մեծ վայելչութեանն Ձերում, մատուցանեմ ընծայեմ յոսկի ամբոքեալ զմասն ինչ նշանի Կենարարի խաչին, ստոյգ վկայութեամբ ի նախկին պատրիարգաց ի խոնարհ ծառայս ածանցեալ. յորոյ վերայ թագաւորն երկնաւոր տարածեաց զամենակար բազուկս իւր փրկել զտիեզերս ամենայն. ապա զայս նուէր հաճութեան ընկալեալ Սուրբ թագաւորութեան Ձերոյ, եւ սովաւ յաղթեացէ սորին թշնամեաց, զօրացեալ եւ եւս ի պահել զերկրպագուս սմին ի խաղաղութեան:

Աղերս մաղթանաց մատուցեալ գերամբարձ բարձրութեան Ձերում առաջի տարածանեմք հաճել հայիլ աչօք քաղցրութեան ի մեզ՝ ի հպատակ ծառայս, նաեւ ի նուիրակս մեր, որք առաքին աստի անդր ի յատկացեալ ժամանակս ընդ բարձր տէրութեամբ Ձերով բնակեալ ի մերազնեայ ժողովուրդս. որպէս առնէին ցայսօր զշնորհս զայս փառաց ի փառս հանգուցեալ բարեյիշատակ նախնիք Ձեր, զորս շնորհ եւ ի Ձէնջ անտարակոյս յուսամք վայելել: Որպէս ահա վայել է ազգ մեր, որ ընդ բարձր իշխանութեամբ Ձերով, կացուցանելով Ձեր նոցա հովիւ արժանաւոր զարբազան Յովսէփ Արքեպիսկոպոսն զհաւատարիմ ծառայն Ձեր շնորհելով սմա զառաջնորդութեան պատիւ եւս:

Որ եւ գիտէ պատմել, եթէ հաճեսցի մարդասիրութիւն Ձեր լսել ինչ զմէնջ:

Ենթարկեալ զիս եւ զօրս ընդ ինեւ ի խնամս պաշտպանութեան Ձերում, կնքեմ զէս:

Ինքնակալ Կայսերական մեծ վայելչութեան Ձերում

Խոնարհագոյն ծառայ օրհնաբան
Պետրոս արքեպիսկոպոս եւ պատրիարք
Սրբոյն Երուսաղեմի մասին հայոց

Կնիք

Ի Սուրբ Քաղաքն
Յերուսաղէմ:
Ի 5 յունուարի 1799.

Степенный и Честнейший Архиепископ
Армянский Петр

Грамоту Вашего Степенства от 5-го генваря сего года, которою Вы поздравляли Нас со вступлением на наш Прародительский Императорский Всероссийский Престол, Мы получили, равно как и отправленыя через Архиепископа почтеннаго Иосифа, в знак преданнейшей верности Вашей к Нам, две части от животворящаго Древа Спасителя Нашего Иисуса Христа, вложенныя в золотой Кресте, за что изъявляя Вам особливое Наше благоволение, охотно возобновляем здесь уверения, что Мы всегда пребудем склонны оказывать Милость по всему верноподданному армянскому Народу В России обитающему, пребываем Вам благосклонны.

Оргинальное подписанно Его
Императорскаго Величества
рукою, тако . . . ПАВЕЛ

Павловск
Июня 20-го дня 1799 года

Թարգմանութիւն Կայսերական հրովարտակին:

Պատուաւոր եւ Ամենայարգելի Պետրոս Արքեպիսկոպոս Հայոց

Նամակն Ձերոյ Յարգութեան յունուար ամսոյ սոյնոյ ամի, որով Դուք շնորհաւորեալ էիք մեզ, ընդ մուտ Մեր Ծնողական Ինքնակալական Աթոռ ի վերայ ամենայն Ռուսաց, զայն ընկալաք Մեք, համեմատ նմին եւ առաքեցեալն ձեռամբ յարգոյապատիւ Արքեպիսկոպոսին Յովսէփայ՝ ի նշան դարաւանդական հաւատարմութիւն Ձերոյ առ Մեզ՝ երկու մասն ի Կենաց Փայտէ Փրկչին Մերոյ Յիսուսի Քրիստոսի, եդեալն ի ոսկեայ խաչի, որոյ սակս բացայայտեմք Ձեզ զմերս յատուկ բարեհաճութիւն: Յօժարութեամբ վերանորոգեմք աստէն հաւատարմացուցումն, որ Մեք յամենայն ժամ յարամնամք ցուցանել զողորմութիւն առ ամենայն հաւատարիմ հպատակացն մերոց, ազգին հայոց, բնակեցելոցն ի Ռուսաստան:

Յարամնամք Ձեզ բարեհաճութեամբ:

Ի վերայ սեփհականին
ստորագրեալ է Նորին Կայսերական
Մեծութիւնն այսպէս՝

ՊՕՂՈՍ

Ի Պալովսկի,
յամի Տեառն 1799—որդին
եւ ի յունիսի 20 երրորդում աւուր

Առ Գերազանց եւ Պայծառափայլ Ալեքսանդրը Գրաֆ Արտաքին իրաց Կայսերական Հանդիսավեհութեան Կայսերն Ամենայն Ռուսիայի

ԳԹԱԾԱԳՈՅՆ ՏԷՐ.

Զտիրական ողջոյնն եւ զառատազեղ օրհնութիւնն Սրբոց Տեղեացս Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի մատուցանեմ Վեհութեան ձերում եւ խնամածու Տէրութեանդ: Յորժամ լսելի եղեւ ձայն աւետեաց առ խոնարհ ծառայս, թէ արժանաժառանգն գահընկալութեան փառահեղ եւ Ինքնակալն Ծիրանածին Օգոստափառ ի Հայրենի թագաւորութեան բազմեալ՝ յաւուր տօնի օծման Նորին ի նորապսակ կայսերութիւն, առհասարակ ազգ եւ ազինք որք են ընդ հովանեաւ խնամոց Սուրբ թագաւորութեան նորա, կատարեցին տօն ցնծութեան բերկրալից ուրախութեամբ· ընդ այն եւ մեք ուրախ եղաք յոյժ. ուստի ընդ նոսին եւ մեք համաձայնեալ բովանդակ ուխտիւ ժառանգաւորաց ի Սուրբ Տեղիս մատուցաք աղօթս եւ պաղատանս առաջի Փրկչին Մերոյ Քրիստոսի՝ յաղագս անյաղթ եւ անպարտելի կայսերութեան նորա, զի կեցցէ տէրութիւն նորա յամայր ամս պտղովք արդարութեան եւ ճշմարիտ խաղաղութեամբ երկնաւոր թագաւորին. որ եւ բարձրասցի արդարութիւն նորա ի զօրութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Արդ քանզի առաւելութիւն սիրոյն մերոյ առ մեծ վայելչութիւն տէրութեան նորա, եւ գորովագութ մարդասիրութիւն Սուրբ թագաւորութեան նորին որ առ մերազնեայս, քաջալերեալ յորդորեցին զծառայս համարձակիլ գրրով ի շնորհաւորութիւն տիրապարգեւ Սուրբ Օծման նորապսակ Կայսերութեան նորա:

Ցայն սակս ընդ գրոյն աղերսանաց, գոլով ընծայ հոգեւորական նուիրեցաք մեծ վայելչութեան նորա, յոսկի՝ ամփոփեալ զմասն ինչ Կենարար Սրբոյ Խաչին, ստոյգ վկայութեամբ ի նախկին պատրիարգաց ի նուաստ ծառայս ածանցեալ, ուստի խոնարհաբար յոտս բարձրութեան ձերոյ դիմեալ, ո՛ Գթածագոյն Տէր, աղաչեմ զի զսոյն ընծայ հոգեւորական եւ գիր աղերսական մատուսջիք ի մէնջ Օգոստափառ Կայսերութեան նորա:

Վերստին հայցեմք եւ աղերսեմք ի գերակայ բարձրութենէ ձերմէ, նայիլ քաղցրաճայեաց ակնարկութեամբ ի մեզ, եւ օգնական լինել նուիրակացն մերոց որք առաքին աստի այդր ի յատկացեալ ժամանակս ընդ վարդեմի սովորութեան առ հայասեր ժողովուրդս բնակեալս ի տէրութեան ձերում՝ ընդ հովանեաւ խնամոց գերագահ ինքնակալութեանդ: Եւ որպէս եղեալ է մինչեւ ցայսօր ի ձէնջ առ մեզ շնորհ խնամոց եւ բարութեան, զնոյն շնորհ յուսամք վայելել եւ այժմ եւ առ յապա, ի բարեգութ Խնամածութենէ Ձերմէ: Որպէս աւա վայելէ ազգ մեր, որ ընդ բարձրը իշխանութեամբ Ձերով, ունելով իւր հովիւ արժանաւոր զՍրբազան Յովսէփ Արքեպիսկոպոսն:

Որ եւ գիտէ պատմել եթէ հանեսցի Խնամք Ձեր լսել ինչ զմէնջ:

Եւ ի վախճանի բանիս, խոնարհութեամբ յարգութիւն մատուցեալ վեհազուն անձինդ, խնդրեմ յԱստուծոյ՝ շնորհել ձերում բարձրութեան զամենայն մեծամեծս եւ անձկալի բարօրութիւնս:

Խոնարհագոյն ծառայ գովաբան
Պետրոս Արքեպիսկոպոս և Պատրիարք
Աստուածալնոյ Քաղաքին Երուսաղեմի
Ի վանս Սրբոյ Առաքելոյն Յակոբայ Մեծին

Կնիք

Ի Սուրբ Քաղաքն
Յերուսաղէմ
Ի 5 յունուարի, 1799:

Степенный и Честнейший Архиепископ Армянский и Титулярный Патриарх Святого Града Иерусалима Петр

Почтенное Ваше писание к Его Светлости канцлеру от 5-го генваря сего года здесь получено по кончине уже его, по управлении же мною сими делами, не оставил я поднесть с переводом грамоту и письмо Ваше с золотим Крестом, в коем вложенныя части животворящаго Древа Спасителя Нашего Иисуса Христа, Его Императорскому Величеству моему всемилостивейшему Государю. Сколько же охотно Его Императорское Величество соизволил снизойти на изображенныя прошения Ваши, и с каким высокомонаршим благоволением оныя принять соизволил, все то усмотреть изволите из всемилостивейшей Его Императорскаго Величества Всеавгустейшаго моего Государя и Самодержца Всероссийскаго Грамоты ныне отправленной в ответ к Вам. Его Императорское Величество, в доказательство особливаго своего при том монаршаго благоволения собственно к особе Вашей, повелеть соизволил при нынешнем же случае отправить панагию, осыпанную алмазами и цветными каменьями на золотой цепочке, да парчи золотой и серебренной тридцать аршин, которой знак Императорской к Вам милости; для доставления Вам вручен Архиепископу Иосифу. В прочем

приятно мне было быть некоторым образом в случае сем Вам полезным и уверить Вас, что я с искренним почтением на всегда пребуду.

Вашего Степенства покорный слуга
Граф Виктор Кочубей

В Санктпетербурге
Июня 23-го дня
1799 года

Թարգմանութիւն թղթոյն գրաֆ Վիկտոր Կոչուպեյի:

Պատուաւոր եւ Յարգելագունեղ Պետրոս Արքեպիսկոպոս Հայոց եւ Պատրիարգ Սուրբ Քաղաքին Երուսաղեմայ

Յարգոյ գրութիւն ձեր առ Նորին Լուսափայլ քնեազ կանցելարն ի հինգերորդ յունուար ամսոյ սոյնոյ ամի ստացեալ եղեւ զկնի վաղնանի նորին, ուստի ըստ կառաւարելոյն իմոյ զայսոսիկ գործք, ոչ զանց արարի ես մատուցանել, հանդերձ թարգմանութեամբ, զնամակն ձեր, ընդ ոսկեայ խաչին, յորում եդեալ կայր մասունն ի Կենաց Փայտէն Փրկչին Մերոյ Յիսուսի Քրիստոսի, Նորին Կայսերական Մեծութեանն՝ իմ ամենողորմածագունեղ թագաւորին. եւ թէ որքան յօժարութեամբ Նորին Կայսերական Մեծութիւնն իջաւ ի գծագրեալ խնդիրս ձեր. եւ որպիսի բարձրագոյն տիրական բարեյօժարութեամբ զնոսին ընկալնուլ բարեհաճեցաւ, զայն ամենայն տեսանել կարէք ի յԱմենողորմածագոյն Նորին Կայսերական Մեծութեան Օգոստափառ թագաւորին իմոյ եւ ինքնակալին Ամենայն Ռուսաց այժմ առաքացելոյ հրովարդակէն՝ պատասխան ձերդ գրեցելոցն: Այլ եւ Նորին Կայսերական Մեծութիւնն, ի ցուցումն յատկականի ողորմածութիւն իւրոյ եւ կայսերական բարեհաճութեան առ յատուկ անձն ձեր, հրամայեալ հաճեցաւ, ի սոյն հանդիպման, ուղեւորել առ ձեզ պնակէ մի ալմասիւ եւ գոյնզգոյն ակամբ զարդարեալ հանդերձ ոսկեայ շղթայիւ, եւ դիպակս ոսկեայ եւ արծաթաթելիւ քանակութեամբ երեսուն կանգուն, որք են նշանք Կայսերական առ ձեզ ողորմածութեան. եւ վասն հաստատանելոյ առ ձեզ յանձնեալ եղեւ Տեառն Յովսեփայ Արքեպիսկոպոսին. այլեւ ախորժ եղեւ ինձ՝ զիարդեւիցէ կերպիւ այսմիկ հանդիպման ի շահ ձեր օգնական գտանեցայ. եւ հաստատմացուցանել ձեզ յարամնալն իմ իսկական վերապատութեամբ:

Ձերոյ Յարգութեան
ամենախոնարհ ծառայ
Գրաֆ Վիկտոր Կոչուպեյ

Ի Սանկտպետերբուրգ
յունիսի 23 երրորդումն աւուր
1799-որդ ամի:



Կ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ս. ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ

Բարսեղ Կեսարացու անունը Մաշտոցի անվան Մատենադարանի գրչագրերում հանդիպում է գրության բազմազան ձևերով (Բասիլ, Բասիլիոս, Բարսիլոս, Բասելիոս, Վասիլ, Բասիլեոս, Բարսեղ և այլն): Սակայն ամենատարածվածն ու հնագույնը № 948 գրչագրում հանդիպող Բարսեղ ձևն է, որին և հետևում ենք[1]:

Դժվար է պատկերացնել Մեծն Բարսեղի կյանքն ու գործունեությունը առանց իր իսկ «Վարք»-ի հայերեն գրչագիր թարգմանություն-խմբագրությունների, բազմաթիվ թղթերի, Գրիգոր Աստվածաբանի «Դամբանական»-ի, առանձին թղթերի ու այլ սկզբնաղբյուր գրոց պարունակած մատենագրական եզակի վկայությունների հաշվառման:

Բարսեղ Կեսարացին ծնվել է 329 թվականին, Կեսարիայում[2]: «Մեծն Բասելիոս ծնեալ ի հօրէ Պոնդացի և ի մօրէ Կապպադովկացի, ոչ յանհշանից ոմանց, այլ ի մեծաց և յերևելեաց և ճշմարտութեան հաւատովն պայծառ»[3]:

Հայտնի է, որ Կեսարացու հայրը բացառիկ ընդունակ ու պատրաստված դեմք է եղել և ճարտասանական արվեստի իր արտակարգ ունակությամբ որոշակի հեղինակություն վայելել Պոնտոսում, Կապադովկիայում և Փոքր Հայքում[4]:

---

[1] Ձեռ. № 948, էջ 147ա—161ա: «Վարք»-ի այս հնագույն գրչագրում ընդամենը երկու անգամ է հանդիպում Բասիլիոս ձևը (տե՛ս էջ 154ա—բ):

[2] Migne, Patr. graeca, t. 29, էջ VI, Христианское чтение, СПб., 1866, էջ 17, **Дж. Робертсон**, История христианской церкви, т. I, СПб., 1890, էջ 241, **Գ. Զարբհանալեան**, Պատմութիւն մատենագրութեան յունաց, հռովմայեցւոց եւ հարց եկեղեցւոյ, Վենետիկ, 1856, էջ 731, նոյնի՝ Մատենադարան, հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ—ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 325, **Е. Лебедева**, св. Василий Великий, СПб., 1902, էջ 5, **Ա. Ալպօյաճեան**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Գահիրէ, 1937, էջ 258:

Սակայն Բարսեղ Կեսարացու ծննդյան թվականի շուրջ եղել են զանազան կարծիքներ: Տարբեր ժամանակներում, առանց բանասիրական հետախուզման, ծննդյան թվական են առաջադրվել՝ 299-ը (տե՛ս **Մ. Մուրատեանց**, Պատմութիւն քրիստոնէական եկեղեցւոյ, Գալաց, 1898, էջ 170), որը միայն վրիպակ կարող է լինել, 303-ը (տե՛ս История русской литературы, т. I, М.—Л., 1941, էջ 187), 320-ը (տե՛ս **Ա. Սուքրեան**, Սուրբ Բարսեղ եւ իր երկասիրութիւնքն, «Բազմավէպ», 1877, հատոր Լէ, էջ 323), 326-ը (տե՛ս **Հուսիկ եպիսկոպոս**, Անապատականներ և վանականութիւն, Վաղարշապատ, 1906, էջ 44), «ըստ ոմանց յամի 328 և ըստ այլոց 317» (տե՛ս Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, ի Հ. Մկրտիչ վարդապետէ Աւգերեան, յաշակերտութենէ մեծին Մխիթարայ Աբբայիսր, հատոր Ժ, Վենետիկ, 1814, էջ 325), 330-ը (տե՛ս **А. Архимандрит**, Жизнь святого Василия Великого, архиепископа Кессарий Каппадокийского и его пастырская деятельность, СПб., 1873, էջ 20. **Н. Каменский**, св. Василий Великий, арх. Кесарий Каппадокийский, его жизнь и избр. творения, СПб., 1894, էջ 3, **Ф. Фаррар**, Жизнь и труды свв. отцов и учителей церкви, СПб., 1891, էջ 453, Жития святых, празднуемых прав. русскою церковию, под. ред. Д. И. Протопопова, Москва, 1892, էջ 7, **Ե. Տեր-Մինասյան**, Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, հ. Ա, Էջմիածին, 1908, էջ 269, **С. Радциг**, История древнегреческой литературы, Москва, 1959, էջ 551, История Византий, т. I, Москва, 1967, էջ 53:

[3] Ձեռ. № 6036, էջ 205ա: Հմմտ. ձեռ. №№ 4150, էջ 21ա, 3275, էջ 147բ, 621, էջ 55ա:

[4] Творения иже во святых отца нашего Григория Богослова, архиепископа Константинопольского, Слово 43, Надгробное Василию, архиепископа Кесарий Каппад., «Русский паломник».

Բարսեղ Կեսարացու մայրը՝ Էմիլյան, նույնպես կրթված, քրիստոնեությանը նվիրված անձնավորություն է եղել: Նրա ծնողները, շատերի նման, ժամանակին տանջամահ են եղել ի սեր Քրիստոսի:

Պոնտոսում են անցել Բարսեղ Կեսարացու մանկությունն ու նախնական ուսումնառությունը, որտեղի իր առաջին դաստիարակին ու ուսուցչուհուն նա միշտ էլ հիշել է երախտագիտությամբ[5]:

Գրիգոր Աստվածաբանի վկայությամբ՝ Բարսեղ Կեսարացին մինչև կապադովկյան Կեսարիա ուսանելու գնալը Պոնտոսում, հոր անմիջական նախաձեռնությամբ ուսումնառության առաջին փորձերն էր անում, որը «ոչ նպաստակ խփելու, ոչ այծ խրտնեցնելու և ոչ էլ եղնիկ որսալու էր վարժեցնում..., այլ ուսուցանում էր գիտության սկզբնական ոլորտները և աստվածասիրություն սերմանում. մի խոսքով՝ ամենաառաջին դասերով իսկ մղում հետագա կատարելության»[6]:

Բարսեղը կարճ ժամանակում ձեռք է բերում գիտական որոշ պատրաստություն, և հայրը միտք է հղանում ուսումնառությունը շարունակելու նպատակով նրան ուղարկել Կեսարիա:

Ե՞րբ և ո՞ր Կեսարիա:

Բարսեղ Կեսարացու մասին եղած մեզ ծանոթ գիտական գրականության մեջ նրա ուսումնատեղին համարվում է կապադովկյան Կեսարիան: Այս մասին կարևոր են Գրիգոր Աստվածաբանի և Բարսեղ Կեսարացու հաղորդումները 4-րդ դարի կապադովկյան Կեսարիայում գոյություն ունեցող կրթական վիճակի՝ ու բարձր գիտական մտքի մասին: Գր. Աստվածաբանը վկայում է, որ Կեսարիան համարվում էր լուսավորության կենտրոն և կարող էր հպարտանալ գիտնականների շատությամբ: Ավելին, նա, խոսելով Բարսեղի Կեսարիա ուսանելու գնալու մասին, ավելացնում է. «Խոսում եմ մեր հանրահայտ Կեսարիայի մասին, (քանզի այն ինձ համար էլ ուղեկից ու դաստիարակ է եղել), որին առանց տարակուսելու կարելի է անվանել գիտության օջախ և իր ենթակայության տակ գտնվող բնակավայրերի քաղաքակրթության օրրան»[7]:

Աստվածաբանի «մեր հանրահայտ» բնորոշումը ինքնին ապացույց է այն բանի, որ խոսքը կապադովկյան Կեսարիայի մասին է, որովհետև ինքը՝ Գրիգոր Աստվածաբանն էլ նույն Կեսարիայից էր և գրում է իր ծննդավայր քաղաքի ու դաստիարակների՝ Բարսեղ Կեսարացու մասին:

Ուսումնասիրողների մեծ մասը կապադովկյան Կեսարիան է համարում Բարսեղ Կեսարացու առաջին ուսումնատեղին: Հիրավի, կապադովկյան Կեսարիան այն ժամանակ մեծ քաղաք էր և համարվում էր մշակութային խոշոր կենտրոն[8]: Նույն Կեսարիայում, ասվեց, Բարսեղ Կեսարացու հայրը համարվում էր նշանավոր ճարտասաններից մեկը: Նման պայմաններում, հասկանալի է, ոչինչ չէր կարող խանգարել Բարսեղի լիարժեք ուսումնառությանը Կեսարիայում, ուստի և հազիվ թե հարկ լիներ մտածել առանց հայրենի քաղաքում ուսանելու նրան ուրիշ քաղաք տանելու մասին: Այսպիսով, Գր. Աստվածաբանի վերոբերյալ հաղորդումը, որին ոչ մի հիմք չունենք չհավատալու, և ուսումնասիրողների հավաստի պնդումները հիմք են տալիս ասելու, որ Բարսեղ Կեսարացին ուսանել է կապադովկյան Կեսարիայում, ուր, անշուշտ, կար բարձրագույն դպրոց[9]:

Գրչագրերում Բարսեղի Կեսարիայում ուսանելու ժամանակաւիջոց են ընդունվում մի դեպքում 5, մեկ այլ դեպքում՝ 7 տարիները (Ե և Է ամ): Ինչպես ենթադրել է տալիս գրչագրերի համեմատությունը, դա արդյունք է «Ե» և «Է»-ի շփոթի, սխալ ընթերցման: Այլապես ինչպես բացատրել Կեսարացու վարքի մասին պարունակած բազմաթիվ տվյալներով նույնացող գրչագրերի զանազանվելը նշված կետում[10]:

Համոզիչ է այն վկայությունը, թե «Զսա ծնօղք սորա **.Է. ամեայ** ետուն յուսումն գրոց և **.Է. ամ** ի դպրոցի կացեալ և **ԺԵ ամեայ** եղեալ գնաց յԱթէնս՝ ի մայրն իմաստութեանց»[11]:

Այսպես ընդունելու դեպքում՝ Բարսեղ Կեսարացին 343—344 թթ. ավարտում է Կեսարիայում սկսած ուսումնառության առաջին շրջանը: Կարևոր է, սակայն, Բարսեղի, այսպես կոչված, կեսարյան ուսումնառությանը վերաբերող Գրիգոր Աստվածաբանի հետեվյալ բնորոշումը. «Նա ճարտասան էր ճարտասանների մեջ՝ մինչև նրանց ունկնդրելը, փիլիսոփա էր փիլիսոփաների մեջ՝ մինչև փիլիսոփայության դասընթաց անցնելը...»[12]:

Բարսեղ Կեսարացին առանց դժգոհելու ուսումնառության կեսարյան շրջանից «Եւ ոչ ընդդիմադրեալ յուսումունն՝ ցանկայր հմուտ լինել փիլիսոփ[այ]ական արուեստիցն. զմտաւ ածէր թողուլ զքնկութիւն իւր, զի էր ի Կեսարիա Կապադոկիացւոց»[13]: Այս վկայությունը Աթենքի ուսումնառությանն է վերաբերում,

---

1912, էջ 607—609 (Այսուհետև՝ Դամբանական), Migne, հ. 29, էջ VI—VII, Վարք սրբոց. 1814, էջ 326:

[5] Творения иже во святых отца нашего Василия Великого, архиепископа Кесарий Каппадокийская, изд. третее, Москва, 1892, թուղթ 196 (204) և 215 (223): (Այսուհետև՝ В. Великий):

[6] Դամբանական, էջ 610:

[7] Նույն տեղում:

[8] Փ. Փարար, նշվ. աշխ., էջ 454:

[9] **Ն. Ադոնց**, Հայ գիտական դէմքեր Բիւզանդիայում (տե՛ս Պատմական ուսումնասիրութիւններ, Պարիս, 1948, էջ 501): Այսուհետև «Կեսարիա»-ն հիշատակելիս ի նկատի ունենք կապադովկյանը:

[10] Ձեռ. №№ 948, էջ 148բ, 992, էջ 194բ, 3275, էջ 147բ: Հմմտ. ձեռ. №№ 84, էջ 253ա, 993, էջ 727ա, 4150, էջ 59ա—բ:

[11] Ձեռ. № 9063, էջ 95ա: Հմմտ. ձեռ. № 992, էջ 194բ:

[12] Դամբանական, էջ 611:

[13] Ձեռ. № 948, էջ 148բ: Հմմտ. ձեռ. № 993, էջ 727ա, Վարք սրբոց, 1874, էջ 222:

սակայն, ինչպես կտեսնենք, հիմքեր կան ենթադրելու, որ նա ուսանել է նաև Կ. Պոլսում, ուր կային ճարտասանության և փիլիսոփայության շատ նշանավոր ուսուցիչներ, որոնց համբավի մասին խոսում էին քաղաքի սահմաններից շատ հեռու[14]:

Քիչ բան է հայտնի Բարսեղ Կեսարացու Պոլսում ուսանելու մասին: Ուսումնասիրողներից շատերը բնավ չեն անդրադառնում Բարսեղի՝ Լիբիանոսին աշակերտելու խնդրին, ոմանք էլ, առանց բանասիրական հետազոտման, չեն ընդունում կամ, լավագույն դեպքում, կասկածի տակ են առնում տվյալ իրողությունը[15]:

Սակայն, Կեսարացու վարքի հնագույն գրչագրում բազմիցս խոսվում է Կ. Պոլսի համալսարանի հայտնի վարդապետ Լիբիանոսի և Բարսեղի ծանոթության ու մտերիմ փոխհարաբերության մասին: Ավելին, որոշակի ակնարկ կա նրանց զբաղեցնող խնդրի շուրջ. «Իսկ Ղեւոնիոս սկսաւէր ի խնդիր ինչ ընդ նոսա (=Բարսեղի և այլոց հետ) ի բանս հոետորական եւ նոքա առաջի եդեալ զբանս յաղագս հաւատոցն Քրիստոսի»[16]: Իսկ № 4150 գրչագրում Բարսեղի և նրա դասընկերների մասին ասված է. «Հանդիպեցան հանճարեղ վարդապետի, որում անուն էր Լիբիանոս և ուսան ի նմանէ զՀոմերոսի ստորոգութիւնսն ի հոետորականս շարամեկնել, և սոքա ուսուցին նմա և աշակերտաց իւրոց զպատուիրանս աստուածային գիտութեան»[17]:

Ֆ. Ֆարրարը Բարսեղ Կեսարացու երկրորդ ուսումնատեղին համարում է Կ. Պոլիսը, որտեղ և հավանական է համարում նրա և նշանավոր հոետոր Լիբիանոսի ծանոթությունը: Նա ձեռքի տակ ունեցել է այս երկու նշանավոր անձանց փոխադարձ նամակագրության փաստեր, որոնց հավաստիությունը, մեզ անհայտ պատճառով, կասկածի տակ է առնում[18]:

Սակայն, Լիբիանոսին ուղղված Բարսեղի պատասխան թղթերը որոշակի վկայություն են երկու անձանց ծանոթության: Ավելին, պարզվում է, որ Բարսեղ Կեսարացին Լիբիանոսին աշակերտելուց հետո էլ շարունակել է նրա աշխատությունների ուսումնասիրումը, երբեմն պահանջել որևէ նորավարտ գործ, ուսումնասիրել ու հիացմունքի խոսքեր գրել նրան: Թղթերում էլ, հարկավ, ոչ մի ակնարկ չկա այն մասին, թե ինքը երբ և որքան ժամանակ է աշակերտել Լիբիանոսին: Համենայնդեպս, դա պետք է լիներ 344—351 թթ., քանի որ 343 թվականին, ասվեց, դեռևս Կեսարիայում էր ուսանում, իսկ 352 թ., ինչպես կտեսնենք, մեկնում է Աթենք՝ ուսանելու:

Բարսեղ Կեսարացին որքան էլ աշակերտեր Կեսարիայի և Կ. Պոլսի նշանավոր ճարտասան-փիլիսոփաներին, այդուամենայնիվ, 4-րդ դարում անհնարին էր պատկերացնել ավարտուն ուսումնառություն առանց Աթենքի համալսարանի: Գրչագրերում պահպանվել են այսօրինակ վկայություններ ուսումնառության նպատակով Կեսարացու Աթենք մեկնելու մասին. «մայրն նորա առեալ զնա էջ յԱթէնս պարկեշտութեամբ բազմաւ եւ ժուժկալութեամբ զարդարեալ, եւ երթեալ առ իմաստասէր վարդապետն հեղեանցուց, որում անուն էր Եւուդոս, եւ տուեալ զնա (=Բարսեղին) յուսումն փիլիսոփայութեան»[19]: Մեկ այլ գրչագրի համաձայն՝ Բարսեղ Կեսարացին «ԺԵ ամեա եղեալ գնաց յԱթէնս՝ ի մայրն իմաստութեան»[20] և այլն:

Աթենքի համալսարանում դասավանդում էին. ա) քերականություն, որ այն ժամանակ նշանակում էր դասական հունարենի, պոեզիայի կանոնների, եկեղեցական պատմության, գրականության, ընդհանուր պատմության ըստ ամենայնի ուսումնասիրում և պատմա-բանասիրական քննության հմտացում, բ) ճարտասանություն և փիլիսոփայություն: Ճարտասանությամբ հարց ու պատասխանի ձևով վիճաբանելու հատուկ արվեստ էր մշակվում, որը, պրոֆ. Ն. Ադոնցի բնորոշմամբ, «հարկաւոր էր ոչ միայն հեթանոս աղանդաւորների, այլ եւ քրիստոնեայ հերձուածների դէմ պայքարելիս»[21]: Գր. Աստվածաբանը վկայում է, որ Բարսեղը գիտության յուրաքանչյուր բնագավառ ուսումնասիրում էր կատարելության աստիճանի: Ով կարող էր չափվել նրա հետ ճարտասանության բնագավառում, փիլիսոփայության մեջ ով էր ավելի ուժեղ, քան նա: Թերևս ավելի հեշտ կլիներ դուրս գալ լաբիրինթոսից, քան նրա փաստերի կապակցումից՝ երբ ինքը դրանց կարիքը զգար[22]:

Բարսեղին դասավանդում էին հայազգի Պրոյերեսիոսը[23], իմաստասիրության վարդապետ Եվուդոսը[24], ճարտասանության փառաբանված ուսուցիչ Հիմերիոսը[25] և այլք, որոնց Գր. Աստվածաբանը հոչակավոր է անվանում: Եվուդոսիոսը Բարսեղ Կեսարացուն «...դիւրութեամբ հաւանեալ այնչափ, մինչեւ զարմանալ ընդ նա՝ վարդապետին եւ աշակերտացն, բանզի էր նորա աշակերտակից Գրիգորիոս Մեծն»[26]:

Հետաքրքիր է այն իրողությունը, որ Աթենքի փառաբանված համալսարանի ուսուցիչների մեջ այն ժամանակ կային հեթանոսներ, որոնք դասավանդում էին վաղուց քրիստոնեությունն ընդունած պատանիների: Հեթանոսական հավատի երկրպագու էր նաև

---

[14] Դամբանական, էջ 611:

[15] Գ. Զարբհանալյանը բնավ չի երկմտում Բարսեղի Կ. Պոլսում ուսանելու, նշանավոր ճարտասան Լիբիանոսին աշակերտելու խնդրում: (Տե՛ս Պատմութիւն մատենագրութեան..., էջ 731:

[16] Ձեռ. № 948, էջ 151բ—152ա:

[17] Ձեռ. № 4150, էջ 59բ: Հմմտ. ձեռ. №№ 3275. էջ 147բ, 9063, էջ 95ա, 84, էջ 253բ:

[18] **Ф. Фаррар**, նշվ. աշխ., էջ 382, 455, նաև՝ 978-ի 15-րդ ծան.:

[19] Ձեռ. № 948, էջ 148բ:

[20] Ձեռ. № 992, էջ 194բ:

[21] **Ն. Ադոնց**, նշվ. աշխ., էջ 503:

[22] Դամբանական, էջ 617—618: Հմմտ. Տ. Վարդապետ, նշվ. աշխ., էջ 731:

[23] Վարք սրբոց, 1814, էջ 327—328:

[24] Ձեռ. №№ 948, էջ 148բ., 2046, էջ 56ա:

[25] **С. Радциг**, նշվ. աշխ., էջ 548, 551, 552;

[26] Ձեռ. № 948, էջ 148բ:

հիշյալ Եվուղղոսը: Բարսեղ Կեսարացին «Խնդրէր եւ զԵուուղղոս վարդապետն իւր, վասն զի նա էր առաջնոր բանին, փոխարէն աշխատութեան նորա բերեալ զամբիծ հաւատսն, զի դարձուսցէ զնա յուղիղ հաւատս»[27]: Այլ վկայությամբ՝ Կեսարացին «Մեծաւ ջանիւ արար զնա (=Եվուղղոսին) քրիստոնեայ»[28]:

Գրիգոր Աստվածաբանը համեմատաբար ընդարձակ մանրամասներով է ներկայացնում Բարսեղի Աթենքից վերադառնալը: Դա մոտավորապես 356 թվականին էր: Նրա այն դիտողությունը, թե «Բարսեղը նավ էր՝ գիտությամբ ծանրաբեռնված»[29], որոշակի ակնարկ է Աթենքում նրա ստացած ուսումնառության գիտական խորության մասին:

Աթենքյան ուսումնառությունը, մասնավորապես փիլիսոփայության դասընթացի տիրապետումը, ինչպես նաև անապատական կյանքի նկատմամբ ունեցած երբեմնի հետաքրքրությունը Բարսեղ Կեսարացուն ստիպեցին վանական կյանքին ըստ ամենայնի հաղորդակցվելու նպատակով, լինել Ալեքսանդրիայում, Եգիպտոսում, Պաղեստինում, Ասորիքում:

Նա արտակարգ զարմանքով, հանախ էլ հիացմունքով է պատմում իր այցելած վայրերի մենակյացների մասին: Զարմացնողը առանձնապես նրանց չափավոր սննդի, աշխատանքի համբերատարության, անտրտունջ աղոթելու և մշտապես աղքատության մեջ է:

Բարսեղ Կեսարացին մոտ 360 թվականին վերադառնում է Կեսարիա: Արևելք կատարած ճանապարհորդության հիման վրա նա հանգեց երկու կարևոր հետևության. ա) թե մարդիկ չպետք է անպայման առանձնության մեջ ապրեն, բ) անձնուրացության և անձնաշարշար լինելու չափազանցություններին վերջ դնելու համար պետք են կանոններ[30]:

Դա այն ժամանակ էր, երբ Կեսարիայի թեմի արքեպիսկոպոսի թափուր տեղի համար հոլովվում էին Եվսեբիոսի և ս. Բարսեղի անունները: Գր. Աստվածաբանի վկայությամբ՝ «Եվսեբիոսին ընդդիմանում էր եկեղեցու ընտրյալ և իմաստուն խավը...»[31]: Բարսեղ Կեսարացու թեկնածությունը համեմատաբար ավելի շատ կողմնակիցներ ուներ, և դա հասկանալի է. նրա մոտ ըստ էության գնահատվում էր սիստեմատիկ կրթությունն ու լավատեղյակությունը եկեղեցու գործերին: Սակայն ընտրվում է Եվսեբիոս Կեսարացին:

Գրիգոր Աստվածաբանը վկայում է, որ Բարսեղի և Կեսարիայի թեմի նորընտիր առաջնորդ Եվսեբիոսի միջև անհամաձայնություն առաջացավ: Թե ինչպես և ինչ խնդրի շուրջ՝ գերադասում է լռել[32]:

Բնավ չիտրացնելով Եվսեբիոսի հետ ունեցած անհամաձայնությունը, Բարսեղ Կեսարացին թողնում է Կեսարիան և պարփակվում Պոնտոսի իր մենաստանում:

Նա հիացմունքով է խոսում իր նախընտրած մենաստանի մասին. «Ամենից կարևորը այն է, որ,—գրում է նա,—տեղն այս ինձ համար ծնում է պտուղներից քաղցրագույնը՝ անդորրը, քանզի ազատված եմ ոչ միայն քաղաքային ժխորից, այլ բացակայում է ճամփորդն անգամ...»[33]:

Բարսեղ Կեսարացին մենաստանում տարված էր ս. Գրքի ու նրա մեկնաբանների աշխատությունների ուսումնասիրությամբ, երբ արիոսականության տարածման և, Վաղես կայսրի ընկերակցությամբ, արիոսական եպիսկոպոսների Կեսարիա ուղևորվելու լուրը հասավ նրան: Վկայություններ կան, որ եկեղեցուն վերահաս ծանր վտանգի կանխազգացումը Եվսեբիոսին ստիպել է խնդրել Բարսեղ Կեսարացուն՝ վերադառնալ Կեսարիա և կանխել սպառնացող վտանգը[34]: Դա հաստատվում է նաև Գր. Աստվածաբանի հաղորդմամբ: Բարսեղ Կեսարացուն ուղղված թղթում նա գրում է. «Աստվածասերն մեր Եվսեբիոս եպիսկոպոսը հակված է մեզ հետ հաշտվելու և բարեկամանալու ու փափկում է ժամանակի հետ, ինչպես երկաթը կրակի մեջ: Կարծում եմ՝ դու կստանաս թուղթ՝ խնդրական ու հրավիրման. այդ մասին ինքը ինձ հայտնեց...»[35]: Թուղթը, ամբողջությամբ, արիոսականությանն ուղղված դատափետանք է և խնդրանք՝ գալու ու պաշտպան կանգնելու ուղղափառ եկեղեցու վարդապետությանը:

Իրականում Եվսեբիոս Կեսարացին եկեղեցու համար դժվարին պայմաններում վերանայել է իր և Բարսեղի փոխհարաբերությունը, հստակել Կեսարացու անվամբ հոլովվող բամբասանքների իսկությունը և կանչել նրան: Մի գրչագրում Եվսեբիոսի մասին ասված է. «Բայց իբրև ետես եպիսկոպոսն ուղիղ զԲարսեղ և սուտ զմատնիչսն, դարձաւ սիրով առ նա և գրեաց գալ յեկեղեցին»[36]:

Բարսեղը Կեսարիա է վերադառնում 364 թվականին և, հակառակ իր իսկ ընդդիմացումներին, նույն թվականին էլ ձեռնադրվում է երեց[37]:

Կեսարիայի թեմը վստահվում է նրան, թեև արքեպիսկոպոսի Աթոռը շարունակում էր զբաղեցնել Եվսեբիոս Կեսարացին. «Ստացվեց իրավունքների (բառացի՝ իշխանության) զարմանալի ներդաշնակություն և կապ. մեկը «հոտին» էր ղեկավարում, մյուսը՝ «հովիվներին»[38]:

---

[27] Ձեռ. № 948, էջ 149ա: Հմմտ. Վարք սրբոց, 1874, էջ 223—224:

[28] Ձեռ. № 992, էջ 195ա: Հմմտ. 2046, էջ 56ա, 4150, էջ 59բ:

[29] Դամբանական, էջ 618:

[30] Ф. Фаррар, նշվ. աշխ., էջ 459: Հմմտ. Հուսիկ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 45:

[31] Դամբանական, էջ 621:

[32] Դամբանական, էջ 621: Հմմտ. Վարք սրբոց, 1814, էջ 335:

[33] **В. Великий**, թուղթ 14:

[34] **Փաւստոսի Բուզանդացւոյ** Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1933, էջ 106: Հմմտ. Վարք սրբոց, 1814, էջ 338:

[35] **Гр. Богослов**, թուղթ 15 (19):

[36] Ձեռ. № 437, էջ 323բ:

[37] **Гр. Богослов**, Թուղթ 11 (11):

[38] Դամբանական, էջ 624—625: Հմմտ. Փ. Բուզանդ, էջ 108:

Վկայություն կա, որ «...եղև ի չար արանց չարախաւսութիւն զԲարսղէ առ սուրբն Եւսեբիոս, որպէս թէ խորհի նա առնուլ զաթոռն Եւսեբեայ, վասնզի հանոյ էր Բասիլիոս յաչս ամենեցուն»[39]: Ահա թե ինչու Եվսեբիոսը նախանձով, երբեմն էլ չարությամբ է նայել Բարսեղ Կեսարացու օրավուր բարձրացող փառքին ու ժողովրդայնությանը: Ուստի և, ինչպես պատմառաբանվում է սկզբնաղբյուրներում, Բարսեղը, տեսնելով արքեպիսկոպոսի իր նկատմամբ ունեցած անբարյացակամ վերաբերմունքը, կարճ ժամանակով կամովին հեռանում է եկեղեցուց և պարփակվում իր երբեմնի մենաստանում[40]:

Եվսեբիոսի վերաբերմունքը, անշուշտ, ուներ էական նշանակություն Կեսարացու համար, բայց վերջինիս առանձնանալը սոսկ դրանով պատճառաբանելը համոզիչ չէ: Նկատել ենք, որ Բարսեղ Կեսարացին 364 թ. Կեսարիա է վերադառնում Գր. Աստվածաբանի խնդրանքով՝ եկեղեցուն սպառնացող վտանգը կանխելու և նույն թվականին էլ երեց ձեռնադրվում: Հենց դա էլ խոսում է այն մասին, որ նա, փաստորեն, աշխատում էր միաժամանակ չառնչվել ոչ աշխարհիկ կյանքին, ոչ էլ եկեղեցու գործերին, այլ լինել առանձնության մեջ: Գր. Աստվածաբանին հասցեագրած թղթերից մեկում Կեսարացին գրում է. «Իսկ այսոցիկ մի է փախուստ, որոշումն յաշխարհայնոցս ամենեցունց և յաշխարհէ գնացումն, ոչ արտաքոյ սորա լինել մարմնապէս, այլ վշտակցութեամբ առ մարմին զանձնն դարձուցանել, անքաղաք, անտուն, անինչ[ք], ան[ընկերաբար], անստացուածս, վարս անիրականս, անփոփոխելիս, անուսումն մարդկայնոց վարդապետութեանց, պատրաստ առ ընդունել սրտիւ զաստուածայնոցն վարդապետութեանցն ներ եղեալս տպաւորութիւնս»[41]:

Նման պարագայում Եվսեբիոսի վերաբերմունքը սոսկ առիթ է, իսկ ո՞րն է Բարսեղ Կեսարացու՝ մարդկանցից խուսափելու, առանձնության ձգտելու բուն պատճառը: Առկա մատենագրական տվյալները հիմք են տալիս ասելու, որ հիմնական պատճառը Վաղեսի թագավորության շրջանի անմարդկային հալածանքն էր ուղղափառ եկեղեցու նկատմամբ, որի նպատակը արիոսականության հաստատումն էր: Կեսարացու անապատական հետաքրքրությունը ոչ թե փախուստ էր եկեղեցու բազում հոգևորից, այլ վանքերի ու վանական հաստատությունների հիմնումով յուրահատուկ պայքար էր արիոսական նկրտումների դեմ: Որովհետև «...յորժամ Վաղէս թագաւորեաց զԱրիոսին խորհելով՝ հալածանս յարոյց ուղղափառաց: Զոր իմացեալ սրբոյն Բասիլիոսի ի կողմանս Պոնտոսի երթեալ անապատանոցս յոլով շինէր, զի մի և անդ գտցի հայհոյութեանն Արիոսի»[42]: Այլապես ինչպես բացատրել այն փաստը, որ Կեսարացու անապատական նշված գործունեությունը առավել ևս զայրացրեց Վաղես կայսրին:

370 թվականին, Եվսեբիոս Կեսարացու մահվանից հետո, ս. Բարսեղը ստանձնեց Կեսարիայի թեմը[43]:

Կեսարացուն վրդովեցնում է հոգևոր դասի, հատկապես նրա վերնախավի փողամոլությունը, զանազան անազնիվ միջոցների դիմելը, անաշխատ «վաստակը» և ընդհուպ ձեռնադրության շուրջ սակարկելը:

Բարսեղ Կեսարացու հոգևոր գործունեության ամենապայծառ էջերից են արիոսականության դեմ նրա մղած տևական պայքարն ու հաղթանակը: Վաղես կայսրը երկար ժամանակ չկարողանալով արիոսականություն քարոզող իր եպիսկոպոսներին հաստատել Կեսարիայում, Արևելք արշավանքի գնալիս վերջին փորձն է անում նշված ճանապարհին: Հայտնի է, որ այդ ժամանակ նրա երկրպագուները կարողացել էին շրջապատի շատ նշանավոր եկեղեցիների եպիսկոպոսների տեղահանել և գրաղեցնել նրանց տեղը: Բարսեղ Կեսարացին նախապես տարբեր քաղաքներում կարգեց այնպիսի եպիսկոպոսներ, որոնք ընդունակ լինեն արիոսականների դեմ մղելու դավանաբանական պայքար և պահպանելու իրենց հավատի անաղարտությունը:

Վաղես կայսրը, նախքան Կեսարիա գնալը, իր նշանավոր մարդկանցից Մոդեստին է ուղարկում Բարսեղի մոտ՝ արիոսականությունն ամբողջ Արևելքում տարածելու իր ծրագրի շուրջ նախապես խորհրդակցելու:

Գր. Աստվածաբանը Կեսարիայում ականատես է լինում Բարսեղի և Մոդեստի վեճին ու հետաքրքիր մանրամասներ գրառում այդ մասին: Ս. Բարսեղի բացառիկ հանգստությունը, բանավիճելու արտակարգ հմտությունը կայսրի ներկայացուցչին ստիպում են խոստովանելու. «Պարտված ենք մենք, արքա, այս եկեղեցու վանահորից: Սա այր է մի, որ վեր է սարսափից, ամենահաստատունը՝ փաստարկներից և ուժեղագույնը՝ համոզմունքներից»[44]: Բարսեղին խորապես ցավ էր պատճառում Արևելքի տասնյակ ուղղափառ եկեղեցիների կործանումն ու ս. հայրերի վախճանը: Ահա թե ինչու Բարսեղ Կեսարացին համարձակություն ունեցավ Վաղես կայսրին առերես ասելու. «...և դու, անիրաւ, ետուր զեկեղեցին մեր արիանոսաց»[45]:

Բազմաթիվ սկզբնաղբյուր-վկայությունների համաձայն՝ Բարսեղը ի սկզբանե վատառողջ է եղել, մանուկ հասակում հանախ մերձիմահ խորացել: Դրա լավագույն սկզբնաղբյուրը ինքն է՝ Բարսեղ Կեսարացին, երբ հանախ է ստիպված լինում խոստովանելու, որ բազում էական գործեր կիսակատար են մնում, քանզի հիվանդությունը խանգարում է: Մի առիթով նա գրում է. «...Հիվանդությունը անբաժան է ինձանից սկսած վաղ հասակից մինչ ծերություն...»[46]:

---

[39] Ձեռ. № 4150, էջ 77բ: Հմմտ. ձեռ. № 437, էջ 323բ:

[40] **Փ. Բուզանդ**, էջ 104—105:

[41] Ձեռ. № 5595, էջ 346ա:

[42] Ձեռ. № 4150, էջ 21բ:

[43] Ձեռ. № 948, էջ 154ա:

[44] Դամբանական, էջ 634:

[45] Ձեռ. № 84, էջ 258բ:

[46] **Վ. Великий**, Թուղթ, 195 (203):

Գր. Աստվածաբանը գրառել է Բարսեղ Կեսարացու մահամերձ վիճակի, մահվան և թաղման մանրամասները: «Նրա համար ամբողջ քաղաքն էր անհանգստացած. ծանր էր կորուստը... մտածում էին փրկել նրա հոգին. թվում էր՝ հնարավոր կլիներ բռնել և բռնությամբ պահել նրան ձեռքերով կամ աղոթքներով (վիշտը նրանց անմիտ էր դարձրել) և, բոլոր դեպքերում, եթե միայն հնարավոր էր, պատրաստ էին անգամ իրենց կյանքը տալու»[47]:

Բարսեղ Կեսարացին մահացավ 379 թվականի հունվարի 1-ին, հինգշաբթի օրը, «վասնզի էր ծերացեալ սուրբն Բարսեղ և էր ցաւագար մարմնով»[48]:

Չնայած վատառողջությանն ու եկեղեցու բազում հոգսերին, Բարսեղ Կեսարացին թողել է բավական հարուստ գրական ժառանգություն: Դեռևս միջնադարում, ինչպես հուշում է 1279 թ. ընդօրինակված № 5595 գրչագրի մի հիշատակարանը, փորձ է արվել խմբավորելու Կեսարացու մատենագրական ժառանգության հայտնի մասը, և կազմվել են նրա գործերի գրչագիր ժողովածուներ[49]: Նշված գրչագրի պարունակությունն են՝ «Վեցաւրեայ»-ն, «Գիրք հարցողաց»-ը, բազմաթիվ ճառեր, քարոզներ, մեկնություններ, թղթեր և այլն: Այդուամենայնիվ, հիմքեր կան ենթադրելու, որ Կեսարացու ոչ բոլոր գործերն են հասել մեզ, այն էլ հեղինակային անաղարտությամբ: Նա մի առիթով թվարկում է տասնյակ տեղանուններ, որոնց եպիսկոպոսների հետ (այդ թվում նաև հայազգի) թղթակցական կապ է ունեցել: Այսօր առկա են իր իսկ հիշյալ թվարկում-վկայությունները, բայց բուն թղթերը չեն պահպանվել:

Մարդու և մարդկային փոխհարաբերությունների համապարփակ բնութագիրն է առկա Կեսարացու ճառերում: Ամենասարսափելին մարդկային կենցաղում, ըստ ս. Բարսեղի, հարբեցողությունն է՝ իր բոլոր կործանարար հետևանքներով: «Արբեցութիւն,—գրում է նա,—չարութեան մայր, առաքինութեան ընդիմակ. զարին երկչոտ ցուցանէ, զողջախոհն՝ պակշոտեալ, զարդարութիւն ոչ գիտէ, զիմաստութիւն ի բաց բառնա, քանզի զոր օրինակ՝ ջուր պատերազմող է հրոյ, սոյնպես անչափութիւն գինոյ զխորհուրդսն շիջուցանէ»[50]: Բարսեղ Կեսարացու համար ամենից ցավալին ու վիշտ պատճառողն այն է, որ կյանքի ճշմարիտ ուղուց շեղվում, հարբեցողությունն են նախընտրում շատ ընդունակ ու բանիմաց պատանիներ, որոնք այլ պայմաններում չափազանց օգտակար կարող էին լինել մարդկանց համար, սակայն «...ըմբել սկսանին և ըմբեն անասնոց օրինակաւ և կոչես իբրև զսիրելի յընթրիսն, արտաքս հանես մեռեալ, գինովն զկեանս նորա շիջուցանելով»[51]: Մարդկային անաղարտ կենցաղի համար մտահոգվող հոգևոր գործիչը, չկորցնելով մարդու նկատմամբ ունեցած իր մեծ հավատն ու սերը, դիմում է դարձյալ մարդկային ողջախոհ բանականության փրկարար զորությանը՝ աղերսելով պայքարել ինքնամոռաց գինարբուքի դեմ, փրկել կործանման եզրին կանգնած ցեղակից էակին. «Ով մարդ, պատերազմ արեր զգիներբուսն, արտաքս հանես զերիտասարդսն ձեռին օժանդակելով՝ որպէս վիրաւորս ի պատերազմէ...»[52]:

Կեսարացու ճառերում պահպանվել են վկայություններ, որոնք որոշակի պատկերացում են տալիս 4-րդ դարի Արևելքի մարդկանց աշխարհիկ նախասիրությունների մասին: Նրանցում հաճախ խոսվում է այն մասին, որ մարդիկ գինարբուքի ժամերը ամենուր անց էին կացնում աշխարհիկ, գուսանական երգ ու երաժշտության ուղեկցությամբ: Ականատես հոգևոր գործչին պակաս գայրույթ չի պատճառում և այն, որ հիշյալ ուրախություններին անմասն, պարզապես ականատես ժողովուրդն անգամ ծիծաղում, հրճվում էր կատարվածով, մինչդեռ, ըստ Կեսարիայի թեմի արքեպիսկոպոսի, «արտասուել էր պարտ, հառաչել ի վերայ եղելոցն», քանզի «երգ պոռնկութեան հնչեցեալ ի բաց հանին զաղմոսս և զօրհնութիւնս, զոր ուսար...»[53]:

Ժամանակի բարքերը, մարդկային փոխհարաբերություններն ու բարոյական ցածրացումները մտածելու, ողբալու շատ բան են տալիս, ու ինքը՝ մարդու անբասիր հարաբերությունների համար պայքարող Բարսեղ Կեսարացին, չգիտի որը ողբալ. «Զորս ողբացից՝ զաղջկունս անփորձ ամուսնութեան, եթէ որք ընդ լծով ամուսնութեան էին կալեալք, քանզի ոմանք երթեալ գնացին զկուսութիւն ոչ ունելով և ոմանք զպարկեշտութիւն արանցն ոչ դարձուցին...»[54]:

Աշխատասիրությունը, սեփական աշխատանքով ապրելը, ըստ Կեսարացու առանձին ճառերի, մարդկային արժանապատվության գրավականն են: Ինքնին հակակրանք, խոր հիասթափություն են առաջացնում անաշխատ կյանք վարելը, այլոց աշխատանքով ապրելը: Դա այնքան նկատելի ու էական կողմ է, որի հիշեցման անհրաժեշտությունը պետք է առմիշտ բացառել մարդու համար: Բայց, որքան էլ ցավալի է, բանականությամբ օժտված մարդ արարածը դեռևս չունի բնազդով առաջնորդվող մրջյունի աշխատասիրությունը և հետևող է արատավոր կենցաղի: Կեսարացին աշխատասիրություն արմատավորելու և բարին խրախուսելու նպատակով լոկ՝ Աստծո արարած մարդուն երբեմն ստորադասում է անկատ կենդանիներից, քանզի «եթէ մրջիւն կարէ ոչ մուրանալով և ոչ վարձու առնլով կերակրիլ, և մեղուք զնշխարս իւրոց կերակրոյն թագաւորաց եւ շնորհեն, որոց ոչ ձեռս և արուեստ բնութիւն ետ, իսկ դիւրահնն[ա]ր կենդանի մարդ մի յամենեցունց հնարից ոչ գտանես առ ի կենցաղոյս սնունդ»[55]:

---

[47] Դամբանական, էջ 653:

[48] Ձեռ. № 992, էջ 199բ:

[49] Ձեռ. № 5595, Բարսեղ Կեսարացի՝ Մատենագրութիւնք, էջ 1ա—400բ:

[50] Ձեռ. № 2549, էջ 90բ—91ա:

[51] Ձեռ. № 2549, էջ 94բ:

[52] Անդ:

[53] Ձեռ. № 2549, էջ 95ա:

[54] Ձեռ. № 2549, էջ 95բ:

[55] Ձեռ. № 2549, էջ 126ա:

Բարսեղ Կեսարացու ճառերում, ուր քննվում են բազմազան բնույթի հարցեր, միշտ էլ առկա է հեղինակի խրատական-դաստիարակչական որոշակի նպատակադրումը, վատը անգոսնելու և բարին արթագործելու եզակի հետաքրքրությունը: Նրա ճառերի ուսուցողական նպատակը հայոց շրջաններում առանց ենթիմաստի է ընկալվել դեռևս միջնադարում: Մի գրչագրում առկա է հետևյալ պատկերավոր համեմատությունը. այնպես, ինչպես հողագործն է ջանում ժամանակին քաղհանել արտը, որպեսզի փուշը չտարածվի ու չապականի հասկը, կամ բժիշկն է վիրահատում հիվանդ օրգանը ի սեր մարմնի ապաքինման, Բարսեղ Կեսարացին էլ «...տեսեալ զքաղաքացիսն վաշխ և ի տոկոսիս ախտացեալ խօսի առ նոսա, զի դադարեցուցէ յախտէս և սկիզբն առնէ ի մարգարէական բանիցն և ցուցանէ ի գրոց զախտիս այս չարութիւն, խրատէ և զկարօտեալն ոչ առնուլ վաշխովք»[56]:

Հայերեն հնագույն թարգմանությամբ մեզ են հասել Բարսեղ Կեսարացու ոչ քիչ թվով մեկնություններ, դավանաբանական գործեր և վկայաբանություններ, որոնք Արևելքի քրիստոնեացման ժամանակաշրջանում բացառիկ կարևոր նշանակություն ունեին: Ամենից շատ քրիստոնեության տարածման շրջանում էր պետք բացատրել հավատի կարևոր նշանակությունը և եկեղեցու դերը վերջինիս շուրջ ծագող վեճերը կանխելու ու միակ ճշմարիտ ելքը մատնացույց անելու գործում: Կեսարացին հատկապես ընդգծում է այն միտքը, որ իր խոսքը ոչ թե «երկրաչափական հարկաւորութեամբք» ճնշող, այլ «հոգւոյն զօրութեամբ» գործող հավատի մասին է:

Մի գրչագիր վկայությամբ այսպիսի բնութագիր է տրվել Կեսարացու՝ վկայաբանությունների նկատմամբ ունեցած հետաքրքրությանը. «Մեծն ամենայն հայրապետաց և վկայասէրն Բասիլիոս յամենայնի հնարէր անյագ զինքն ցուցանել ի վկայական պատուասիրութիւն»[57]: Կեսարացին երբեմն ընդհատելով իր վկայաբանական վերապատմում-բացատրությունները, տալիս է ժամանակի եկեղեցու դժվարին կացության, հավատի սակարկման համառոտ բնութագիրը: «Հուրն պատրաստ էր,—գրում է նա,—սուրն սրեալ էր, խաչ կանգնեալ էր խորխորատն, անիւն, բուքքն. ոմանք փախչէին, իսկ ոմանք խոնարհ էին, ոմանք դդուէին(՞), իսկ ոմանք յառաջ, քան զվորձն միայն ի սպառնալեացն սարսէին...»[58]:

Կեսարացու մատենագրական ժառանգության պատկառելի մասն են կազմում կանոնները, որոնցում քննված են ժամանակի հոգևոր ու աշխարհիկ բնագավառներին վերաբերող սոցիալ-տնտեսական, պատմական, իրավական, բարոյական, ամուսնական և այլ հարցեր: Բարսեղ Կեսարացու գլուխ-գործոց երկասիրությունն են կազմում «Վեցաւրեայ» ճառերը՝ «թարգմանեցեալ ի յունականէն ի հայկական բարբառ, ի ձեռն ճշմարտաբանից թարգմանչաց մերոց»[59]: «Վեցաւրեայ»-ում արծարծված են շրջապատող աշխարհի, բնության ամենաբազմազան առարկաների, երևույթների, բուսա-կենդանական աշխարհի առանձնահատկությունների, տիեզերական մարմինների հարատև փոփոխությունների, մարդկային փոխհարաբերությունների, տնտեսական նորմերի, կենցաղի, սովորույթների և անգամ կյանքի ու մահվան առեղծվածի հետ կապված ամենաբազմազան հարցեր, որոնց քննությունը դուրս է ներկա նպատակից:

Ս. Բարսեղի մատենագրական ժառանգությունը, բացառությամբ «Վեցաւրեայ»-ի, «Պատարագամատոյց»-ի և հատուկենտ ճառերի, իր գերակշռող մասով տակավին մնում է գրչագիր մատյաններում, թերևս որի պատճառով էլ հայ իրականության մեջ առ այսօր մեզ անհայտ է նրա մատենագրության ամբողջական գնահատման որևէ փորձ:

---

[56] Ձեռ. № 437, էջ 325բ:

[57] Ձեռ. № 4150, էջ 82ա:

[58] Ձեռ. № 5595, էջ 371բ:

[59] Ձեռ. № 10258, էջ 2ա:





Հ. Ս. ԲԱԴԱԼՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՄԱՍՏԱՍԵՐԻ ՏՈՄԱՐԻ ՇՈՒՐՋԸ

Հայոց հին տոմարը 6—12-րդ դարերը ընկած ժամանակաշրջանում ունեցել է զարգացման երկու հիմնական էտապ: Առաջին շրջանը համապատասխանում է 6—7-րդ դարերին, երբ Անանիա Շիրակացուն հաջողվեց կարգավորել տոմարական հաշվումներում առաջացած խառնաշփոթությունը: Այդ շրջանում ընդունվեց և հաստատվեց հայոց Մեծ թվականը, որ սկզբնավորվել է 552 թվականի հուլիսի 11-ին, ընդունվեց Էաս Աղեքսանդրացու հայտնաբերած 532-ամյա օրինաչափությունը: Այդ օրինաչափությունը հանդիսանում է ըստ հին տոմարի Զատկի, տոների, Լուսնի փուլերի և շաբաթվա օրերի նույնությամբ կրկնվելու պարբերաշրջանների արտադրյալը (19×28=532): Հայոց շարժական տոմարի ամիս և ամսաթվերը զուգակցվեց այլ ազգերի տոմարների հետ: Շիրակացին Էաս Աղեքսանդրացու 532-ամյա պարբերաշրջանը կիրառեց նաև հայոց շարժական տոմարում զուգակցված հուլյան տոմարի հետ: Հարկ է նշել, որ նախքան Շիրակացին հայերը օգտագործել են Անդրեաս Բյուզանդացու կազմած 200-ամյա տոմարը, որը կիրառվել է 352 թվականից մինչև 552 թվականի վերջը:

Այնուհետև, Անանիա Շիրակացուց շուրջ մի քանի դար հետո հայոց տոմարում նշանակալից բարեփոխումներ տեղի չեն ունեցել:

Հայոց տոմարի պատմության զարգացման երկրորդ էտապը սկսվել է հայ անվանի պատմիչ, տոմարագետ, փիլիսոփա և բանաստեղծ Հովհաննես Իմաստասերի (Հովհաննես Սարկավագ) կատարած նշանակալից ուսումնասիրություններով: Նա ապրել է XI դարի վերջում և XII դարի սկզբում: Հովհաննես Իմաստասերը հանդիսացել է իր ժամանակի լավագույն տոմարագետներից, նա, բացի հայոց տոմարից, հրաշալի իմացել է նաև շատ ազգերի տոմարները. այդ երևում է մեզ հասած նրա տոմարական աշխատանքներից:

Հովհաննես Իմաստասերի տոմարագիտական աշխատությունների՝ մեզ հասած պատառիկներից առանձնապես աչքի են ընկնում նրա «Պատճէն տոմարի», «Մեկնութիւն տոմարիս հայկազնեայ», «Խառնախորանը», «ՇԼԲ (532) աղյուսակները» և բազմաթիվ այլ աշխատություններ:

Հայոց հին տոմարի պատմության էջերում նշանակալից տեղ ուներ Հովհաննես Իմաստասերի հայոց տոմարը շարժականից անշարժ դարձնելու բարեփոխությունը. Ամանորը՝ Նավասարդի 1-ը փետրվարի 29-ից (շարժական տոմարով), անշարժ տոմարի բարեփոխության ժամանակ օգոստոսի 11-ը տեղափոխվելը և այլն:

Հովհաննես Սարկավագի վերը նշված ուսումնասիրությունները հանդիսանում են հայոց տոմարի պատմության զարգացման գոհարները:

Այստեղ հարկ է հիշատակել Կիրակոս Գանձակեցու երկտողը՝ նվիրված Հովհաննես Իմաստասերի անշարժ տոմար ստեղծելու նշանակությանը. «Զբազմաց փափագելին և ոչ ձեռնհաս, չհաստատ և զանշարժ տոմարն կարգեաց հայոց փոխանակ շարժականին և անհաստատնոյն և, արար և միաբանութիւն ամենայն ազգաց տոմարի ընդ հայոց վասն զի հոյժ իմաստուն էր այրն և աստուածային շնորհօք զարդարեալ...»[1]:

Այնուհետև, Կիրակոս Գանձակեցի պատմիչը մեծ հիացմունքով է խոսում Հովհաննես Իմաստասերի մասին, որպես իր ժամանակի բազմակողմանիորեն զարգացած գիտակի. «Սորա բանի ամենայն իմաստասիրական ոճով է, որպէս Գրիգորի աստուածաբանի, և ոչ գեղջուկ»[2]: Հովհաննես Իմաստասերն իր ժամանակին եղել է բնական գիտությունների մեծ գիտակ:

Հետաքրքրական է նշել նաև Ղ. Ալիշանի գնահատականը Հովհաննես Իմաստասերի մասին. «Հովհան Իմաստասերին անունն ալ, մականունն ալ, գրիչն ալ ժառանգեց Սարկավագ (Հովհաննես Իմաստասեր— Հ. Բ.) և ամեն պատմիչ և հիշատակողք չեն կրնար

---

[1] **Կիրակոս Գանձակեցի,** Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 62:

[2] Անդ, էջ 63:

անունը տալ՝ առանց կոչելու Սուրբ, Իմաստասեր կամ Մեծ Իմաստասեր, Աստվածային իմաստասեր, Գերունակ վարդապետ, Մեծ սոփեստեն և այլն...»[3]:

Այստեղ տեղին է նշել, որ պրոֆեսոր Ա. Աբրահամյանի «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը» աշխատությունը շնորհակալ գործ է, որ նա երկար տարիների քրտնաջան աշխատանքով հնամաշ ձեռագրերից ի մի հավաքելով լույս աշխարհ է հանել «Իմաստասերի» ինչպես տոմարագիտական, այնպես էլ մյուս աշխատությունները:

է զգացվել: Այդ ժամանակ հայոց տոմարի կարգավորման հարցերով հանգամանորեն զբաղվել է անվանի գիտնական, լավագույն տոմարագետ Հովհաննես Իմաստասերը: Նրան հաջողվել է հայոց տոմարի մեջ կատարել արմատական բարեփոխություն. Նա շարժական տոմարի փոխարեն կազմում է անշարժ տոմար, այսինքն առաջին անգամ հայոց տոմարում ընդունում է նահանջ տարվա գործածությունը: Հայոց շարժական տոմարը անշարժ դարձնելու բարեփոխությունը Հովհաննես Սարկավագի կողմից հա-



Նկար 1



Նկար 2

Մեր նպատակն է սույն հոդվածում համառոտակի լուսաբանել Հովհաննես Իմաստասերի շարժական տոմարից անշարժին անցնելու բարեփոխությունը, ինչպես և վերը նշած մյուս տոմարական հարցերը և նրանց նշանակությունը տոմարագիտության ու ժամանակագրության մեջ:

Հայոց տոմարի Մեծ թվականը սկսելու բարեփոխությունից և Անանիա Շիրակացու կազմած 532-ամյա էապես պարբերաշրջանի տոմարից հետո, XI դարի երկրորդ կեսում հայոց տոմարի մեջ արմատական բարեփոխություն կատարելու անհրաժեշտությունն

վանաբար կատարվել է այն ժամանակ, երբ վերջացել է Անանիա Շիրակացու 532-ամյա շրջանի համար կազմած օրացույցը: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ Հովհաննես Իմաստասերը հայոց տոմարի վերաբերյալ կատարել է այնպիսի բարեփոխություն, ինչպիսին ցանկանում էր կատարել VII դարում Անաստաս կաթողիկոսը Անանիա Շիրակացու միջոցով: Մինչ այդ բարեփոխությունը հայոց օրացուցային տարվա տևողությունը ընդունված էր 365 օր, որը հռոմեական և այլ անշարժ օրացույցների համեմատությամբ յուրաքանչյուր 4 տարին մեկ անգամ մեկ օրով առաջ էր ընկնում, այսինքն Հայոց տոմարը նահանջ տարի չուներ, ինչպիսին ունեին Հուլյան տոմարը և այլ ազգերի օրացույցներ:

[3] **Ղ. Ալիշան**, Հուշիկք հայրենեաց հայոց, հատոր Բ, Վենետիկ, 1870, էջ 235:

Նկար 3

Հովհաննես Իմաստասերը շարժական տոմարից անշարժին անցնելու բարեփոխության հետ միաժամանակ 1085 թվականի օգոստոսի 11-ի հաշվով սկսեց նոր թվական, որը կոչվում է հայոց փոքր թվական կամ «Սարկավագադիր թվական»:

Մի շարք պատմագիրներ և մատենագիրներ իրենց կազմած հիշատակարաններում և տոմարական աշխատություններում հայոց Մեծ թվականին զուգահեռ գործածել են նաև սարկավագադիր թվականը:

Սակայն պետք է նշել, որ Իմաստասերի բարեփոխած տոմարը հայոց եկեղեցական ժողովի կողմից չի քննարկվել պաշտոնապես հաստատելու և ընդունելու իմաստով: Բայց, քանի որ Հովհաննես Իմաստասերի կազմած տոմարը ավելի հարմար ու դյուրին էր, գործածելը, հայոց եկեղեցին կրոնական և այլ տոների համար նպատակահարմար է գտել առաջնորդվել Սարկավագի կազմած անշարժ տոմարով, իսկ քաղաքացիական կյանքում շարունակել են առաջնորդվել մինչ այդ գոյություն ունեցող շարժական տոմարով, պահպանելով հայոց Մեծ թվականը: Սկզբնական շրջանում, Իմաստասերի բարեփոխության ժամանակ, հայոց շարժական տոմարի համաձայն, նոր տարին՝ Նավասարդի 1-ը, համապատասխանում էր փետրվարի 29-ին սակայն Իմաստասերը այդ օրը չընդունեց տարեսկիզբ կամ նոր տարի և բացի այդ, այս հարցում չընդօրինակեց օտար ազգերի օրացույցներից (այսինքն նոր տարին չհամապատասխանեցրեց նրանց նոր տարվա հետ), որոնք վաղուց անցել էին անշարժ օրացույցների գործածությանը: Նա, հավանաբար, հանգամանորեն հետազոտել է այն հարցը, թե ինչպես «Հայոց բուն» թվականը սկզբնավորելու ժամանակ նոր տարին երբ է սկսվել: Մեզ հասած տվյալները վկայում են այն մասին, որ դեռևս հեթանոսական շրջանում հայերը նոր տարին տոնում էին Նավասարդ ամսի 1-ին, որը համապատասխանում էր հռոմեական օրացույցով օգոստոսի 11-ին:

Միանգամայն բնական է, որ՝ Հովհաննես Սարկավագը իր կազմած անշարժ օրացույցով ցանկացել է նոր տարին դարձյալ համարել տարվա այն օրը, որն առաջին շրջանում տոնել են մեր նախնիները: Հավանաբար դրանից ելնելով, նա իր բարեփոխած անշարժ տոմարի նոր տարին՝ Նավասարդի 1-ը փետրվարի 29-ից տեղափոխել է օգոստոսի 11-ը[4]: Պատմությունից հայտնի է, որ այլ ազգերի օրացույցները բարեփոխելիս նույնպես տեղի են ունեցել տարեմուտի տեղափոխման դեպքեր:

Իմաստասերի տոմարագիտական ուսումնասիրությունները մեծ ավանդ են հանդիսացել օրացույցի պատմության զարգացման բնագավառում ընդհանրապես և մասնավորապես հայոց տոմարի զարգացման գործում: Հովհաննես Իմաստասերը կազմել է 532-տարվա տոմար, որտեղ որոշված են առանձին տարիների վերադիրները, յոթներյակը, տանուտերը, զատկական լիալուսինը, Զատիկը, Բարեկենդանը, Վարդավառը, ցերեկվա և գիշերվա տևողությունը և այլն: Նրա 532 տարվա աղյուսակը կազմված է ըստ Հուլյան տոմարի ամիսների և հռոմեական մեծ վերադիրների, որը կազմում է Շիրակացու 532-ամյա պարբերաշրջանում բերված հռոմեական վերադիրների շարունակական կրկնությունը, միայն այն տարբերությամբ, որ Շիրակացու մոտ բերված է հռոմեական փոքր կամ հունա-բյուզանդական վերադիրների սիստեմը, իսկ Սարկավագի աղյուսակում՝ հռոմեական մեծ վերադիրների սիստեմը:

Հայ տոմարագիտության պատմության մեջ հրաշալի ուսումնասիրություն է հանդիսանում Հովհաննես Իմաստասերի «Պատճեն տոմարի» աշխատությունը: Սարկավագի սույն աշխատությունը ընդգրկում է ինչպես հայոց հին տոմարի, այնպես էլ այլ ազգերի և մասնավորապես հռոմեական օրացույցի հիմնական կանոնները: Իմաստասերի մոտ տոմարական կարևոր կանոնները ձևակերպված են հստակ ու պարզ, որոնց միջոցով կարելի է որոշել՝ տարվա վերադիրը, ոսկե թիվը, Լուսնի ծնունդը և լրումը, տանուտերը, ամիս-

[4] Համաձայն Հովհաննես Իմաստասերի կազմած 532 (ՇԼԲ)-ամյա աղյուսակի, որի առաջին տարվա՝ 1085 թվականի Զատիկը եղել է ապրիլի 20-ին, որն հաստատվում է Գինցելի կազմած Զատկի տոների ցուցակով: Ըստ Գինցելի ցուցակի 1085 թվականին Զատիկը նույնպես տեղի է ունեցել ապրիլի 20-ին: Այս հանգամանքը հաստատում է, որ իրոք Հովհաննես Իմաստասերի 532-ամյա պարբերաշրջանի առաջին տարին համապատասխանում է 1085 թվականին (բայց ըստ էության պետք է սկսվեր 1084 թվականից):

ների կրկնակը և կիսակը, յոթներյակը, տարվա եղանակների ժամանակը, Զատկի, Բարեկենդանի, Վարդավառի և այլ բազմաթիվ տոմարական հարցեր: Սարկավագի «Պատճեն տոմարի» աշխատությունը իր բովանդակությամբ և հարցերի ձևակերպման ու պարզաբանման տեսակետից հանդիսանում է տոմարական կանոնների համառոտ հանրագիտարան, որը արժանի է առանձին ուսումնասիրության: Կասկածից վեր է, որ Հովհաննես Իմաստասերը իր «Պատճեն տոմարի» ընդհանրացրած աշխատությունը գրելիս օգտագործել է Անդրեաս Բյուզանդացու, ինչպես և Անանիա Շիրակացու տոմարագիտական աշխատությունները:

Պետք է նշել նաև այն, որ չնայած Իմաստասերի անշարժ տոմարին անցնելը սկզբնավորվել է 1085 թվականի օգոստոսի 11-ին, սակայն 13—14-րդ դարերի հայ մատենագիրների ձեռագրերում պատահում են անշարժ և շարժական տոմարների զուգահեռ գործածությունները, իսկ որոշ աշխատություններում պատահում են նաև ավելի ուշ ժամանակներում:

Յուրաքանչյուր չորս տարին մեկ անգամ հաշվում էին նահանջ:

Իմաստասերի բարեփոխությամբ հայոց տոմարը շատ էր նմանվել Հուլյան տոմարին, որովհետև օրացուցային միջին տարին ընդունվում էր հավասար $365^1/_4$ օրվա, ինչպես Հուլյան տոմարում:

Սարկավագի բարեփոխությունից հետո, հայոց անշարժ տոմարի և հռոմեական օրացույցի ամիսների միջև զուգակցություն ունենալու համար կազմված է համեմատական մշտական աղյուսակ, որի միջոցով հեշտությամբ կարելի է հայոց տոմարի ամսաթվերը արտահայտել հռոմեական ամսաթվերով և ընդհակառակը: Այս զուգակցությունը առանձնապես մեծ նշանակություն է ունեցել հռոմեական օրացույցով որոշած քրիստոնեական եկեղեցական տոների, ինչպես և որևէ նշանավոր իրադարձության ժամանակը հայոց տոմարով և ընդհակառակը, արտահայտելու համար: Դրա համար պետք է օգտագործել ստորև բերված հայոց և հռոմեական ամսաթվերի համեմատական աղյուսակը: Այդ աղյուսակի վերևի մասում գրված են հայոց և հռոմեական ամիսները, յուրաքանչյուր սյունակի ձախ կողմում գրված են հայոց տոմարի ամսաթվերը 1—30, իսկ աջ կողմում հռոմեական համապատասխան ամսաթվերը գրված են երկու շարքով՝ մեկը հասարակ—«ն», իսկ մյուսը նահանջ—«ն» տարիների համար:

Ինչպես տեսնում ենք, հայոց օրացույցի զարգացման պատմությունը չափազանց հարուստ ու ընդարձակ է, դա նշանակում է, որ հայերը հնագույն շրջանից սկսած ուշադրություն են դարձրել տոմարագիտության զարգացման գործին:

Քանի որ որոշ հայ մատենագիրներ օգտագործել են «Հայոց փոքր» թվականը (Սարկավագադիր թվականը), ապա անհրաժեշտ է իմանալ, թե «Հայոց փոքր» և հռոմեական թվականներով արձանագրված ժամանակագրությունները ինչպես արտահայտել մեկը մյուսով փոխադարձաբար: Դրա համար պետք է հաշվի առնել, որ Հայոց փոքր թվականով առաջին



Նկար 4

տարվա սկիզբը՝ Նավասարդի 1-ը, համապատասխանել է հռոմեական 1085 թվականի օգոստոսի 11-ին: Այլ կերպ ասած՝ փոքր թվականի առաջին տարվան համապատասխանել է 1085 թվականի երկրորդ կեսը (օգոստոսի 11-ից մինչև դեկտեմբերի 31-ը) և 1086 թվականի առաջին կեսը (հունվարի 1-ից մինչև օգոստոսի 10-ը ներառյալ):

Հայոց փոքր թվականով արձանագրված իրադարձությունների ժամանակագրությունը հռոմեական տոմարով արտահայտելու և ընդհակառակը կատարելու համար պետք է վարվել հետևյալ կերպ. եթե Հայոց փոքր թվականով տվյալ իրադարձությունը տեղի է ունեցել Նավասարդի 1-ից առաջ, այսինքն հունվարի 1-ից մինչև օգոստոսի 11-ը ընկած ժամանակամիջոցում, ապա պետք է երկու տոմարների թվականների տարբերությունը վերցնել 1085 տարի, իսկ Նավասարդի 1-ից հետո (այսինքն օգոստոսի 11-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակամիջոցում) տեղի ունեցած դեպքերում՝ 1084 տարի:

«Հայոց փոքր» թվականը հռոմեականով արտահայտելու համար հիշյալ համապատասխան տարբերությունը պետք է ավելացնել «Հայոց փոքր» թվականին, իսկ ընդհակառակը կատարելու դեպքում տարբերությունը հանել հռոմեական թվականից ու ստանալ «Հայոց փոքր» թվականը: Հռոմեական և «Հայոց փոքր» թվականի տոմարներով ամիսները և ամսաթվերը փոխադարձաբար մեկը մյուսով արտահայտելու համար պետք է օգտագործել № 1 աղյուսակը:

Աղյուսակ 1

Հայոց անշարժ տոմարի և Հուլյան տոմարի ամիսների և ամսաթվերի զուգակցման մշտական աղյուսակ

Դեկտեմբեր	Օգոստոս	Հոկտ	Սեպտեմբեր	Մայիս	Հունվար	Տրե	Նոյեմբեր	Գարգ	Դեկտեմբեր	Մարց	Հունվար	Մեհեկան	Փետրվար
1	11	1	10	1	10	1	9	1	9	1	8	1	7
2	12	2	11	2	11	2	10	2	10	2	9	2	8
3	13	3	12	3	12	3	11	3	11	3	10	3	9
4	14	4	13	4	13	4	12	4	12	4	11	4	10
5	15	5	14	5	14	5	13	5	13	5	12	5	11
6	16	6	15	6	15	6	14	6	14	6	13	6	12
7	17	7	16	7	16	7	15	7	15	7	14	7	13
8	18	8	17	8	17	8	16	8	16	8	15	8	14
9	19	9	18	9	18	9	17	9	17	9	16	9	15
10	20	10	19	10	19	10	18	10	18	10	17	10	16
11	21	11	20	11	20	11	19	11	19	11	18	11	17
12	22	12	21	12	21	12	20	12	20	12	19	12	18
13	22	13	22	13	22	13	21	13	21	13	20	13	19
14	24	14	23	14	23	14	22	14	22	14	21	14	20
15	25	15	24	15	24	15	23	15	23	15	22	15	21
16	26	16	25	16	25	16	24	16	24	16	23	16	22
17	27	17	26	17	26	17	25	17	25	17	24	17	23
18	28	18	27	18	27	18	26	18	26	18	25	18	24
19	29	19	28	19	28	19	27	19	27	19	26	19	25
20	30	20	29	20	29	20	28	20	28	20	27	20	26
21	31	21	30	21	30	21	29	21	29	21	28	21	27
				22	31	22	30	22	30	22	29	22	28
								23	31	23	30		
										24	31		

Արեգ	Մարտ	Հեկան	Ապրել	Մաքերի	Մայիս	Մարգաց	Հունիս	Հրատեզ	Հուլիս	Ամեկյաց	Օգոստոս
	հ. ն.		հ. ն.		հ. ն.		հ. ն.		հ. ն.		հ. ն.
1 9	8 1	8	7	1	8 7	1	7 6	1	7 6	1	6 5
2 10	9 2	9	8	2	9 8	2	8 7	2	8 7	2	7 6
3 11	10 3	10	9	3	10 9	3	9 8	3	9 8	3	8 7
4 12	11 4	11	10	4	11 10	4	10 9	4	10 9	4	9 8
5 13	12 5	12	11	5	12 11	5	11 10	5	11 10	5	10 9
6 14	13 6	13	12	6	13 12	6	12 11	6	12 11	6	0
7 15	14 7	14	13	7	14 13	7	13 12	7	13 12		
8 16	15 8	15	14	8	15 14	8	14 13	8	14 13		
9 17	16 9	16	15	9	16 15	9	15 14	9	15 14		
10 18	17 10	17	16	10	17 16	10	16 15	10	16 15		
11 19	18 11	18	17	11	18 17	11	17 16	11	17 16		
12 20	19 12	19	18	12	19 18	12	18 17	12	18 17		
13 21	20 13	20	19	13	20 19	13	19 18	13	19 18		
14 22	21 14	21	20	14	21 20	14	20 19	14	20 19		
15 23	22 15	22	21	15	22 21	15	21 20	15	21 20		
16 24	23 16	23	22	16	23 22	16	22 21	16	22 21		
17 25	24 17	24	23	17	24 23	17	23 22	17	23 22		
18 26	25 18	25	24	18	25 24	18	24 23	18	24 23		
19 27	26 19	26	25	19	26 25	19	25 24	19	25 24		
20 28	27 20	27	26	20	27 26	20	26 25	20	26 25		
21 29	28 21	28	27	21	28 27	21	27 26	21	27 26		
22 30	29 22	29	28	22	29 28	22	28 27	22	28 27		
23 31	30 23	30	29	23	30 29	23	29 28	23	29 28		
				24	31 30	24	30 29	24	30 29		
								25	31 30		

Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրել	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս
						հ. ն.					
22 1	22 1										
23 2	23 2	23 1	23 1		23	1 29					
24 3	24 3	24 2	24 2	24 1	24	2 1	24 1 31	24 1 30			
25 4	25 4	25 3	25 3	25 2	25 1	25	3 2	25 2 1	25 2 1	25 1 31	25 1 30
26 5	26 5	26 4	26 4	26 3	26 2	26	4 3	26 3 2	26 3 2	26 2 1	26 2 1
27 6	27 6	27 5	27 5	27 4	27 3	27	5 4	27 4 3	27 4 3	27 3 2	27 3 2
28 7	28 7	28 6	28 6	28 5	28 4	28	6 5	28 5 4	28 5 4	28 4 3	28 4 3
29 8	29 8	29 7	29 7	29 6	29 5	29	7 6	29 6 5	29 6 5	29 5 4	29 5 4
30 9	30 9	30 8	30 8	30 7	30 6	30	8 7	30 7 6	30 7 6	30 6 5	30 6 5

Այստեղ կարևոր է նշել, որ «Սարկավագադիր» կամ «Հայոց փոքր» թվականից «Հայոց Մեծ» թվականին անցնելիս պետք է փոքր թվականին ավելացնել 533 տարի:

Հայոց տոմարի պատմության մասին խոսելիս հարկ է նշել նաև այն հանգամանքը, որ չնայած հայերը արդեն ունեին սեփական անշարժ տոմարը, բայց և այնպես այդ ժամանակաշրջանում միջազգային հարաբերությունների զարգացումից ելնելով, ինչպես այլ ազգեր, այնպես էլ հայերը նպատակահարմար են գտել պաշտոնական համարել Հուլյան տոմարը: Դա տեղի է ունեցել 1317 թվականին Ադանայում գումարված ժողովի որոշմամբ: Սակայն, պետք է նշել, որ դրանից ավելի ուշ շրջանում հայոց տոմարի վերաբերյալ առաջադրվել են նոր բարեփոխություն կատարելու նախագծեր: Անհրաժեշտ է նշել, որ Հուլյան տոմարի կիրառման զուգընթաց շարունակվել է ինչպես հայոց շարժական, այնպես էլ անշարժ տոմարների կիրառությունը: Որոշ հայ հեղինակներ ձգտում էին պահպանել հայոց տոմարի գործածությունն ու ինքնուրույնությունը:

Ադանայի ժողովի որոշումից շատ ավելի ուշ շրջա-

նում Ջուղայի հայերը Հուլյան տոմարին անցնելու փոխարեն ունեցան նոր տոմար, որի մասին կխոսենք մի այլ հոդվածում: Մեզ հասած փաստական տվյալները վկայում են այն մասին, որ հայերը մեծ դժվարությամբ էին հրաժարվում իրենց ազգային օրացույցի գործածությունից: Դրա համար էլ Ադանայի ժողովի որոշումը գործնականում լայն տարածում է գտել միայն մի քանի դարերի ընթացքում:

Այստեղ անհրաժեշտ է նշել նաև այն, որ 1760 թվականին Սեբաստյան Կյուրղի աշխատասիրությամբ Վենետիկում հրատարակվել է «Բուն տոմար հայոց» գիրքը: Սույն գիրքը հիմնականում նվիրված է հայոց տոմարին, որտեղ զետեղված է հայոց Մեծ թվականով 1210—1742 թվականների համար կազմված տոմարը, հաշվումները կատարված են ըստ հայոց տոմարի ամիսների: Այդ աղյուսակում բերված են տոմարի հիմնական տարրերը՝ թվականը, վերադիրը, տարեգիրը, յոթներյակը, զատկական լրումը, Զատիկը և այլն: Այս գրքում ինքը՝ հեղինակը դժգոհում է այն մասին, որ ոմանք աղավաղել ու մոռացության են մատնել հայոց տոմարի կանոնները: Սեբաստյանը հայոց տոմարի կանոնները և նրա գործածությունը վերականգնելու ու պահպանելու նպատակով գրել է «Բուն տոմար հայոց» աշխատությունը: Ահա թե ինչ է գրում նա այդ առթիվ:

«Արդ, որովհետև տոմարս հայոց վասն որոյ ոչ գործածելոյն որպէս թէ դժուար և տարակուսելի թիւր, և մանաւանդ ի տեղիս խախտեցեալք էին հին կանոնքն և խրատքն, վասն որոյ ևս յետինս ուսումնասիրաց զաշխատանս յանձն առեալ ի ստիպմամբ սիրելեալց եղբարց, շինեցի յայսոսիկ նորապէս կանոնքս. և խրատքս, վասն որոյ այնոցից որք տարակուսելի էին և խախտեցեալք»:

Հովհաննես Իմաստասերի կազմած «Խառնախորանը» մի ընդարձակ, մատչելի ու մշտական աղյուսակ է, որը իրենից ներկայացնում է 15 տարբեր ժողովուրդների օրացույցների, ամիսների ու ամսաթվերի սիստեմների զուգակցությունը: Բացի այդ սույն աղյուսակում բերված են հռոմեական վերադիրները, յոթներյակները, շաբաթագիրը, Արեգակի տեսանելի շարժման վերաբերյալ տվյալներ (այբուբեն Արեգականն, գոտիք[5] Արեգականն, աստիճանք[6] Արեգականն, հոլովք[7] Արեգականն, ասպարէզ[8] Արեգա-

Նկար 5

կանն), ցերեկվա և գիշերվա տևողության ժամերը տարվա բոլոր օրերի համար, որը համապատասխանում է Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական միջին լայնությանը:

Հովհաննես Իմաստասերը կատարելով շարժական օրացույցից անշարժին անցնելու բարեփոխությունը, հայոց և նրա հարևան երկրների անշարժ տոմարների ամիսների և ամսաթվերի միջև պարզ զուգակցություն ունենալու առթիվ կազմել է այսպես կոչված «Խառնախորան» աղյուսակները, որտեղ բերված են տասնհինգ ժողովուրդների օրացույցների՝ հռոմեական, հունական, ասորական, պարսկական, հայկական, եբրայական, արաբական, մակեդոնական, եգիպտական, եթովպական, աթենական, բյութանիական, կապադովկիական, վրացական, աղվանական ամիսների անունների սիստեմները[9] և փոխադարձաբար զուգակցությունները:

Այդ աղյուսակը կազմված է ըստ հռոմեական ամիսների հերթականության՝ սկսվում է հունվարով և վերջանում դեկտեմբերով, որոնց հետ զուգակցվում են մյուս ժողովուրդների օրացույցների ամիսները: Յուրաքանչյուր ամսվա համար աղյուսակի տվյալները բերված են երկու էջում: Առաջին էջում գրված են ամսաթվերը (հայկական տառաթվերի սիստեմով),

[5] Այստեղ «Գոտիք արեգական» ասելով պետք է հասկանալ էլիպսաձև բոլորակ, որով շարժվում են մոլորակներն Արեգակի շուրջը, կամ Լուսինը երկրագնդի շուրջը (տես **գոտիք** բառը Ստեփ. Մալխասյանի բացատրական բառարանում):

[6] Խոսքը վերաբերվում է Արեգակի տեսանելի բարձրացումն երկնակամարում:

[7] Նշանակում է Արեգակի թավալումը, շարժումը կամ գլորումը:

[8] Այստեղ «Ասպարէզ Արեգական» ունի երկարության չափի իմաստ, հին Պարսկաստանում ասպարեզը ընդունել են հավասար 222, 112 մետր և նշանակում է ձի վարժեցնելու հրապարակ:

[9] **Ա. Աբրահամյան,** Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 160:

երկրորդ էջում համապատասխան ամիսները և նշանավոր կրոնական անշարժ տոները (նկ. 1 և 2, բերված է «Խառնախորանից» երկու էջ, ձեռ. № 2068):

Հովհաննես Իմաստասերի կազմած «Խառնախորանն» առաջին հայացքից շատ բարդ տպավորություն է թողնում, սակայն, երբ մոտիկից ծանոթանում ենք նրա օգտագործման մեթոդին, դառնում է միանգամայն պարզ ու մատչելի: Այդ աղյուսակների միջոցով վերը նշված ժողովուրդներից որևէ մեկի ցանկացած ամիս և ամսաթիվը միանգամից արտահայտվում է մնացած 14 ժողովուրդների համապատասխան ամիս և ամսաթվերով, էականն այն է, որ սույն զուգակցությունը մշտական է:

Հովհաննես Իմաստասերի «Խառնախորանը» պահպանվել է մի շարք ձեռագրերում, որոնցից ավելի կատարյալն ու ամբողջականը զետեղված է Մաշտոցյան Մատենադարանի № 2068 ձեռագրում, որը գրված է 15-րդ դարում: Այս ձեռագրում բերված «Խառնախորանը» հրատարակել է պրոֆ. Ա. Աբրահամյանը (այլ հրատարակություն մեզ հայտնի չէ): Սույն հոդվածը գրելիս հիմնվել ենք Մաշտոցի անվան Մատենադարանի № 2068 ձեռագրի, ինչպես և պրոֆ. Ա. Աբրահամյանի հրատարակած աղյուսակի վրա:

Հովհաննես Իմաստասերի «Խառնախորան» աղյուսակում 15 ժողովուրդների օրացույցները դասակարգված են հինգ խմբի: Այն օրացույցները, որոնց ամիսները սկսած տարվա առաջին ամսից համապատասխանում են իրար կամ համընկնում են, նաև տարեմուտները կազմում են մի առանձին խումբ: Այլ կերպ ասած յուրաքանչյուր խմբի մեջ եղած ազգերի օրացույցների տարեմուտներն ու ամսամուտները համընկնում են: Դրանից կլինելով 15 ազգերի օրացույցները Սարկավագի «Խառնախորան» աղյուսակում դասակարգված են հինգ տարբեր սիստեմ ունեցող խմբի:

Առաջին խումբը հանդիսանում է հռոմեական օրացուցային սիստեմը, որի մեջ մտնում են հունական և ասորական օրացույցները (նկ. 3):

Երկրորդ խումբը կազմում է եբրայական օրացույցը, որի մեջ մտնում են արաբական և մակեդոնական օրացույցները (նկ. 4):

Երրորդ խումբը հանդիսանում է եգիպտական օրացույցը, որի մեջ մտնում են եթովպական, աթենական, բյութանիական, կապադովկիական, վրացական և աղվանական (Կովկասի ալբաներ) ժողովուրդների օրացույցները (նկ. 5):

Չորրորդ խմբի մեջ մտնում է միայն հայոց տոմարը, իսկ հինգերորդ խմբի մեջ՝ միայն պարսկական օրացույցը (տես նկ. 4):

Վերոհիշյալ խմբերի մեջ մտնող օրացույցների ամիսների անունները ըստ հերթական կարգի (սկսած տարվա առաջին ամսից) բերված են ստորև:

Համաձայն Սարկավագի «Խառնախորան» աղյուսակում բերված տվյալների, առաջին խմբի մեջ մտնող օրացույցներում նոր տարին հռոմեական օրացույցով համապատասխանում է հունվարի 1-ին: Երկրորդ խմբի մեջ մտնող օրացույցների նոր տարին համապատասխանում է մարտի 22-ին (եբրայական, արաբական օրացույցով համապատասխանում է Նիսան ամսի 1-ին, իսկ մակեդոնացոց օրացույցով գերդիմիոն ամսի 1-ին): Երրորդ խմբի յոթ ազգերի նոր տարին համապատասխանում է օգոստոսի 29-ին, որը իր հերթին՝ եգիպտական թոթ, եթովպական մաքարամ, աթենական մենիքիոն, բյութանիական դեսա, կապադովկիական արտանա, վրաց ախալծիղի և աղվանական նավասարդոն ամիսների 1-ին: «Խառնախորան» աղյուսակի համաձայն պարսկական օրացույցի նոր տարին՝ փարվատին՝ տարվա առաջին ամսվա 1-ը համապատասխանում է օգոստոսի 5-ին, իսկ «հայոց անշարժ տոմարով» նոր տարին՝ Նավասարդի 1-ը համապատասխանում է օգոստոսի 11-ին:

Ինչպես տեսնում ենք, հայոց հին տոմարի և պարսկական հին օրացույցի նոր տարին իրարից շեղված են եղել ընդամենը վեց օրով: Սույն աղյուսակում հաշվի են առնված նաև ավելացած ամսի օրերի զուգակցությունը, ինչպես և նահանջ տարիների մեկ լրացուցիչ օրվա հաշվելու տեղն ըստ առանձին օրացույցների:

Հովհաննես Իմաստասերի «Խառնախորանի» կազմելը ունի մոտավորապես 850 տարվա պատմություն, սակայն դեռ չի կորցրել իր նշանակությունը:



Օ. Ս. ԵԳԱՆՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆՑԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՆ

Մաշտոցի անվան Մատենադարանի բազմահազարանոց հավաքածոյի բաղկացուցիչ մասերից է նաև հայագետ Գրիգոր Խալաթյանցի (1858—1912) հայերեն ձեռագրերի հավաքածոն, որն իր ներկա վիճակում ամփոփում է ԺԴ—ԺԹ դարերում ընդօրինակված հինգ տասնյակից ավելի գրչագիր մատյաններ:

Երբ 1903 թվականին Մեսրոպ Տեր-Մովսիսյանը կազմում էր հավաքածոյի ձեռագրերի համառոտ ցանկը[1], այն արդեն բովանդակում էր 48 ձեռագիր (№№ 1—48): Հետագա տարիներին (1904—1912) ավելանում են 10 նոր ձեռագրեր, որոնցից 7-ը Խալաթյանցը արձանագրել է նույն ցուցակի իր կրկնօրինակում (№№ 49—55)[2], իսկ մնացած 3-ը՝ ոչ: Չարձանագրված այդ 3 ձեռագրերը պայմանականորեն նշանակում ենք [56], [57], [58] թվահամարներով:

Ձեռագրերը մինչև Մ. Տեր-Մովսիսյանի կողմից ցուցակագրվելը Խալաթյանցի գրադարանում պահվել են տպագիր գրքերի հետ միասին՝ մեկ ընդհանուր համարակալման տակ: Առկա ձեռագրերից 35-ի վրա պահպանվել են այդ հին թվահամարները՝ 202, 245—269, 271—275, 277, 278, 282:

Հավաքածոյի 58 ձեռագրերից այսօր Մաշտոցի անվան Մատենադարանում են գտնվում միայն 54-ը (№№ 1—8, 10—47, 49—53, [56—58]), որոնք բոլորն էլ ունեն «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԳՐ. ԽԱԼԱԹԵԱՆՑ. БИБЛИОТЕКА Г. А. ХАЛАТЯНЦА» մակագրությամբ ձվաձև կնքադրոշմ: Բացակայում են հետևյալ 4 ձեռագրերը, որոնց ուր գտնվելը մեզ հայտնի չէ.

№ 9. «Շարական, ԺԶ դար (կրկնագիր, նախկին բնագիրը հունարեն է)»:

№ 48. «Գրիգոր Մագիստրոսի Թուղթ, Մ. Էմինի ձեռքով մաքուր արտագրված հին գրչագրից...»:

№ 54. «Биография знаменитых людей Кавказа».

№ 55. «34 թերթ հին ավետարանից, մագաղաթյա գրչագիր»:

Առկա 54 ձեռագրերը Մատենադարան են մուտք գործել տարբեր ժամանակներում և տարբեր ուղիներով:

Ձեռագրերից 1-ը (№ [57]) Մատենադարանը ստացել է 1925 թվականին Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի միջոցով, 3-ը (№№ 6, 29, 34)՝ 1938 թվականին Երևանի գրական թանգարանի հավաքածոյի կազմում, իսկ 38-ը (№№ 2, 3, 5, 7, 10—17, 19, 20, 22, 25, 28, 30—33, 35—37, 39—47, 50—53, [56])՝ 1925 թվականին Լազարյան ճեմարանի հավաքածոյի հետ միասին[3]: Ինչ վերաբերում է մնացած 12 ձեռագրերին (№№ 1, 4, 8, 18, 21, 23, 24, 26, 27, 38, 49, [58]), որոնք, ի միջի այլոց, հավաքածոյի

---

[1] Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների հավաքածո, գործ Մ. Մագիստրոսի, № 29:

[2] Անդ, №№ 98ա, 98բ:

[3] «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հատոր Ա, Երևան, 1965, էջ 132—133:

ամենաարժեքավոր մասն են կազմում, Մատենադարանը ձեռք է բերել 1963 թվականին Մոսկվայում, Գրիգոր Խալաթյանցի ազգականուհի Մարիա Իվանովնա Պաստուխովայից:

Ստորև տալիս ենք Գրիգոր Խալաթյանցի ձեռագրերի հին ու նոր թվահամարների համեմատական տախտակը:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆՑԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

Գ. Խալաթյանց		Մատենադարան	Գ. Խալաթյանց		Մատենադարան	Գ. Խալաթյանց		Մատենադարան
Մագիս-տրոս	Հին		Մագիս-տրոս	Հին		Մագիս-տրոս	Հին	
1	—	10211	21	—	10201	41	277	6726
2	269	6379	22	260	7040	42	261	7078
3	278	6732	23	—	10210	43	259	7061
4	—	10204	24	—	10206	44	262	7076
5	267	7200	25	202	6724	45	247	6533
6	—	8558	26	—	10208	46	282	6331
7	266	7147	27	—	10202	47	250	6602
8	—	10207	28	257	6882	48	—	—
9	—	—	29	—	7677	49	—	10205
10	263	7086	30	245	6520	50	251բ	6566
11	—	6434	31	248	6600	51	251ա	6565
12	254	6877	32	249	6605	52	255	6998
13	253	6727	33	246	6550	53	252	6625
14	272	6609	34	—	8563	54	—	—
15	—	6266	35	268	7190	55	—	—
16	265	7118	36	264	7100	[56]	—	6588
17	256	7001	37	275	6635	[57]	—	6731
18	—	10209	38	—	10203	[58]	—	10200
19	258	6979	39	271	6479			
20	263	6579	40	274	6676			

Թե ո՞ւմ են պատկանել նշված ձեռագրերը նախքան Խալաթյանցի հավաքածոյի մեջ մտնելը, քիչ բան է հայտնի: Ստորև տալիս ենք պահպանված անունների ցանկը:

Էմին Մկրտիչ, Մոսկվա—6 (№№ 6520, 6533, 6550, 6600, 8563): Մ. Էմինի ձեռագրերի մասին տե՛ս «Արձագանք», 1892, № 125:

Էնֆիաճյան Ավետիք և Համբարձում գրավաճառ եղբայրներ, Թիֆլիս—2 (№№ 6266, 8563): Տե՛ս «Էջմիածին», 1968, № 7, էջ 54, 55:

Խալաթյան Աբրահամ, Ալեքսանդրապոլ, 1862 թ.—1 (№ 6602):

Խալաթյանց Հովհաննես Գրիգորի, Ալեքսանդրապոլ, 1865 թ.—2 (№№ 7200, 10209):

Խաչկյան տեր Հովհաննես, Կալկաթա, 1867 թ.—1 (№ 7040): Նվիրել է տեր Հովսեփ Գ. Հ. Էթեապյանին:

Կոխչյան հայր Արտեմ—1 (№ 10202):

Միսաքյանց ընտանիք—1 (№ 10200):

Շերմազանյանց Գալուստ, Թիֆլիս, 1851 թ.—1 (№ 6588):

Պատկանյան Գաբրիել, Պետերբուրգ, 1875 թ.—3 (№№ 6565, 6566, 6625):

Պողոսով Սարգիս, Պետերբուրգ, 1839 թ.—1 (№ 6998):

Սարգսյան Լուտովիկ, ուսուցիչ—1 (№ 10206):

Սողոմոն Միրզա, Ռուսական կայսրության առաջին թարգման—1 (№ 6882):

Տեր-Մատթեոսյան Սենեքերիմ—5 (№№ 6732, 6877, 7118, 8558, 10204):

Օհանյան Հասրաթյանց Գրիգոր, Հին Նախիջևանի Քուլթափա գյուղ, 1910 թ.—1 (№ 10205):

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ (1868—1919)*

7048. ԱՄԵՆԱՅՆ Հայոց Վեհափառ կաթողիկոսի՝ վերջերս ստացած պաշտօնական նամակից քաղուածք: [Կ. Պոլսի հայ մտավորականության, Արևմտյան Հայաստանի հայ բնակչության տեղահանումների, Վանի հայկական թաղամասերը, թուրք կառավարության կողմից, ոմբակոծելու, հրդեհելու և խուզարկումների մասին]: 1915, էջ 455—458:

7049. ԱՐԱՄ:—Ազգիս Վեհափառ կաթողիկոսին ուղղած Արամի գրութիւնը: [Վանից: Խնդրում է բարեգործական և մշակութային ընկերությունների միջոցով օգնություն կազմակերպել Վասպուրականի համար]: 1915, էջ 453—454:

7050. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—[Կոնդակ: Բոլոր թեմերին և համայն հայությանը՝ հայ գաղթականների օգնության գործը կանոնավորելու համար Կովկասի քաղաքներում և գյուղերում գտնվող հանձնաժողովների, միությունների, ընկերությունների համագումար-ժողովի հրավիրում Էջմիածնում]: 1915, էջ 101—103:

7051. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Լոնդոն: Նորին մեծութիւն թագաւորին Անգլիայի Գէորգ V-ի: [Անհազանգող հեռագիր, եղեռնի առթիվ]: 1915, էջ 174:

7052. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Կահիրէ, Նորին գերազանցութիւն Պօղոս Փաշա Նուպարին: [Հեռագիր: Իրրև կաթողիկոսի ներկայացուցիչ և նախագահ հայկական պատգամավորության, գործ դնել ամեն հնարավոր՝ ի պաշտպանություն հայ ժողովրդի Թուրքիայում]: 1915, էջ 175:

7053. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Կոնդակ: [Արևմտահայերի կոտորածների առթիվ կազմակերպել կարգադրիչ եղբայրական օգնության հանձնաժողովներ]: 1915, էջ 3—4:

7054. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Կոնդակ: [Բոլոր թեմերի առաջնորդներին՝ որպես քաջ հովիվ չհուսահատվել ժողովրդի անլույր տառապանքների առաջ, հուսադրել և կազմակերպել օգնության գործը]: 1915, էջ 803—806:

7055. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Կոնդակ: [Բոլոր թեմերին՝ արևմտահայության տարագրության առթիվ կազմակերպել եղբայրական օգնության տեղական հանձնաժողովներ և մասնախմբեր, հավաքված նվիրատվությունները ուղարկել Մայր Աթոռ «Եղբայրական օգնության կոմիտեի» անունով]: 1915, էջ 99—100:

7056. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Կոնդակ: [Պետերբուրգի քաղաքագլուխ կոմս Իվան Իվինովիչ Տոլստոյին և Պետական Դումայի մի շարք անդամներին՝ Արևմտյան Հայաստանի հայ ազգաբնակչության անլույր տառապանքների, կոտորածների առթիվ ոուս կառավարության և ժողովրդի մարդասիրական վերաբերմունքի, դրամական օգնության, 77.000 ռ., և նյութական այլ սիտուլքներով օգնելու առթիվ]: 1915, էջ 421—424:

7057. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Կոնդակ: [Պետրոգրադի քաղաքագլուխ կոմս Իվան Իվանովիչ Տոլստոյին և քաղաքային Դումային, հայ գաղթականության ֆոնդին 50.000 ռ. օգնելու առթիվ]: 1915, էջ 419—421:

7058. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Կոնդակ: [Ս. Էջմիածնի «Եղբայրական օգնության հանձնաժողովին»՝ ստույգ տեղեկագրեր պատրաստել արևմտահայության տարագրության մասին: Կազմակերպել շտապ օգնություն՝ Վասպուրականի, Մանազկերտի, Ալաշկերտի, Բասենի, Բաղեշի, Տարոնի և այլ վայրերի հայ գաղթականներին]: 1915, էջ 515—518:

7059. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Կոնդակ: [Ս. Էջմիածնի սինոդին և հոգևոր ատյաններին՝ պատմական այդ դժվար օրերին պահել ամուսնական և ամուսնալուծության հարցերում եկեղեցու կարգն ու ավանդությունները, տեղի չտալ մոլորությունների]: 1915, էջ 807—809:

7060. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Հռոմ: Նորին մեծութիւն Վիկտոր Էմմանուէլ III-ին, թագաւորին Իտալիայի: [Հեռագիր: Խնդրանք՝ պաշտպանել ամենահին քրիստոնյա մի ժողովրդի, հալածված անգթորեն և թողնված թուրք ֆանատիկոսության կատաղությանը]: 1915, էջ 172:

7061. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Նորին բարձր գերազանցութիւն Արտաքին գործերի նախարար Սերգեյ Դիմիտրիեւիչ Սազանովին: [Հեռագիր: Խնդրանք՝ պաշտպանել արևմտահայ դժբախտներին տանջական կոտորածներից]: 1915, էջ 171—172:

7062. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Նորին վեհափառութեան տնօրէնութիւններից: 1915, էջ 6—10, 104—124, 259—273, 424—434, 521—541, 680—716, 810—837:

7063. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Վաշինգտոն: Պարոն նախարարին Ամերիկայի Միացեալ Նահանգների: [Հեռագիր: Օգնություն հայ ժողովրդին Տաճկաստանում՝ թողնված թուրքական ֆանատիկոսության կատաղությանը]: 1915, էջ 173:

7064. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Վեհափառ Հայրապետի դիմումները: [Օգնության հայցում արևմտահայերին տանջիկ կառավարության կոտորածներից ազատելու համար]: 1915, էջ 170—177:

Բովանդ.՝ **Նորին կայսերական մեծութեան Տ. Փոխարքայ կոմս Իլլարիօն Վորոնցով-Դաշկովին:—Պետրոգրադ՝ Նորին Բարձր Գերազանցութիւն արտաքին գործերի նախարար Սերգեյ Դիմիտրիեւիչ Սազանովին:—Հռոմ՝ Նորին Մեծութիւն Վիկտոր Էմմանուէլ երրորդին, թագաւորին Իտալիայի:—Վաշինգտոն պարոն նախագահին՝ Ամերիկայի Միացեալ Նահանգների:—Փարիզ՝ պարոն նախագահին ֆրանսիական հանրապետութեան:—Լոնդոն՝ Նորին մեծութիւն թագաւորին Անգլիայի Գէորգ հինգերորդին:—Կահիրէ՝ Նորին գերազանցութիւն Պօղոս Փաշա Նուպարին:**

Նույն տեղում՝ ստացված պատասխանները:

7065. ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Փարիզ: Պարոն նախագահին ֆրանսիական հանրապետութեան: [Հեռագիր: Խնդրանք բոլոր միջոցների գործադրությամբ փրկել անմեղ կոտորվող հայ քրիստոնյաներին]: 1915, էջ 173—174:

7066. [ԳԵՎՈՐԳ Ե:—Գրություն Ալեքսանդրիայի (Եգիպտոս) Հայուհյաց Կարմիր Խաչի ընկերության Ատենապետ Զարուհի Գալֆայանին՝ հայ կամավորների համար հայթայթած ներքնազգեստները Օդեսա և Բաթում ուղարկելու մասին]: 1915, էջ 430:

7067. [ԳԵՎՈՐԳ Ե:—Գրություն Դիվանին՝ բաբվաքնակ Համբարձում Ազարյանի՝ Վարդաշենի ծխական դպրոցին նվիրած 2500 ռ. տնօրինելու մասին]: 1915, էջ 275:

7068. [ԳԵՎՈՐԳ Ե:—Գրություն Դիվանին, Մայր Աթոռի թանգարանում պահել Միքայել արձանագրոցի «Վերք Հայաստանին Քանաքեռում» ռելիեֆ-պատկերը]: 1915, էջ 539:

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1968 թ. №№ ԺԱ—ԺԲ-ից, 1969 թ. №№ Ա—Թ-ից և 1970 թ. №№ Ա—Բ-ից:

7069. [ԳԵՎՈՐԳ Ե:—Գրություն Լիմ անապատի վանահայր Հովհաննես վարդապետին և Կտուց անապատի միաբան Ստեփան վարդապետին՝ վերադառնալ հայրենիք, ժողովել բոլոր ձեռագրերը և թանկարժեք հնությունները, ցուցակագրել ու ապահով ճանապարհով բերել ս. Էջմիածին, այնտեղ անկորուստ պահելու համար]: 1915, էջ 811:

7070. [ԳԵՎՈՐԳ Ե:—Գրություն Մայր Աթոռի մատենադարանապետ Հուսիկ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանին՝ մատենադարանում պահելու Լիմ անապատի 17 կտոր ձեռագրերը]: 1915, էջ 704:

Նույնը՝ Աղթամարի անապատի չորս թղթյա Ավետարանների մասին: էջ 704:

7071. [ԳԵՎՈՐԳ Ե:—Գրություն Մայր տաճարի լուսարարապետին՝ անկորուստ պահել Աղթամարից բերված մի փոքր սկիհ ոսկեզօծ մաղզմայով և մի փոքր մյուռոնաթափ և մի մեծ սկիհ ոսկեզօծ առանց մաղզմայի]: 1915, էջ 704:

7072. [ԳԵՎՈՐԳ Ե:—Գրություն Սմբատ Տեր-Ավետիքյանին՝ ապահով ճանապարհով Էջմիածին փոխադրել Վանի և շրջակայքի ձեռագրերն ու այլ հնությունները]: 1915, էջ 825:

7073. [ԳԵՎՈՐԳ Ե:—Գրություններ Էջմիածնի Եղբայրական Օգնության Գլխավոր կարգադրիչ Հանձնաժողովին, Երևանի փոխ-թեմակալին, Վրաստանի առաջնորդին, Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարչին, Ալեքսանդրապոլի, Ղարսի, Հին Նախիջևանի, Տաթևի, Նուխու, Ախալցխայի Հայոց հոգևոր կառավարություններին՝ վիճակագրական տեղեկություններ հաղորդել Արևմտահայաստանից գաղթած հայերի մասին]: 1915, էջ 835:

7074. [ԳԵՎՈՐԳ Ե:—Դիվանի գրություններ՝ Երևանի, Վրաստանի, Շամախու, Աստրախանի, Ղարաբաղի թեմական առաջնորդներին, գանձանակ շրջելով կույրերի օգտին և հավաքված դրամը ուղարկել Կույրերի հոգաբարձության խորհրդին, որի նախագահն է կոմսուհի Ելիզավետա Վորոնցովան]: 1915, էջ 276:

7075. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ Ախալքալաքի գավառի Ջիկրաշեն գյուղում ծխական դպրոց բացելու առթիվ]: 1915, էջ 268:

7076. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ՝ Անանիա արքեպիսկոպոսին Մայր տաճարի լուսարարապետ նշանակելու և տաճարի զարդերը, անոթները ցուցակով նրան հանձնելու մասին]: 1915, էջ 709:

Նույնի մասին սինոդի որոշումը՝ էջ 718:

7077. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ՝ Գարեգին վարդապետ Հովսեփյանին Էջմիածնի եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովի նախագահ նշանակելու մասին]: 1915, էջ 709:

7078. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ՝ Գարեգին վարդապետ Հովսեփյանին ճեմարանի տեսուչ նշանակելու մասին]: 1915, էջ 427:

7079. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ՝ Եվրոպայի հայոց թեմի առաջնորդ Գևորգ արքեպիսկոպոս Ութուճյանին, թեմում կազմակերպել օգնություն՝ ի նպաստ արևմտահայ գաղթականների]: 1915, էջ 106—107:

Նույն տեղում նման բովանդակությամբ կոնդակներ Ամերիկայի հայոց թեմի առաջնորդ Արսեն վարդապետ Վեհունուն, Եգիպտոսի հայոց առաջնորդ Թորգոմ եպիսկոպոսին, Պարսկա-Հնդկաստանի թեմի հայոց առաջնորդին, Հնդկաստանի Կալկաթա և Զիյրա քաղաքների քահանաներին, Ռանգունի, Սինգապուրի, Սուրաբայի, Բաթավիայի, Ջավայի քահանաներին և նույն տեղերի հայ ազգային հասարակական կազմակերպություններին:

7080. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ: Երևանի փոխ-թեմակալ Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանի գլխավորությամբ կազմակերպել արևմտահայ գաղթականներին օգնող հանձնաժողով, տեղաբաշխել Երևանի նահանգի հայաբնակ գյուղերում]: 1915, էջ 9:

7081. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ՝ Էջմիածնի Եղբայրական Օգնության Գլխավոր Կարգադրիչ Հանձնաժողովին՝ Հայաստանի կենտրոնական տեղերում և քաղաքներում բացել հիվանդանոցներ, բուժարաններ, կազմակերպել բժշկական-առողջապահական միություններ՝ փախստական գաղթականներին կերակրելու համար հիմնել սննդատու կայաններ ապահովության դեպքում, փախստական-գաղթականներին վերադարձնել հայրենիք, վերականգնելով նրանց քանդված գյուղերն ու տնտեսությունները]: 1915, էջ 534:

7082. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ Թիֆլիսի Հայկական կենտրոնական Կոմիտեին, Պողոս Նուբար Փաշայի փոխադրած 20.000 ռ. տեղաբաշխել Ալեքսանդրապոլի, Ախալքալաքի, Նոր Բայազետի, Երևանի Եղբայրական օգնության հանձնաժողովներին]: 1915, էջ 263:

7083. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ՝ Հուսիկ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանին, տաճկահայ գաղթականների օգնության գործը կանոնավորելու մարտի 1-ի ս. Էջմիածնում կայանալիք հանձնաժողովների, ընկերությունների և հաստատությունների ներկայացուցիչների ժողովի նախագահ նշանակելու մասին]: 1915, էջ 122:

7084. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ՝ Ռումինիայի թաղական խորհուրդների, հոգաբարձությունների և ազգային հաստատությունների անունով, դրամական օգնություն կազմակերպել Կովկաս գաղթած արևմտահայերի համար]: 1915, էջ 116:

Նույն իմաստով նաև՝ Բուլղարիայի հայոց առաջնորդի և այլ հոգևոր ազգային հաստատությունների անունով: էջ 116:

7085. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ՝ Վրաստանի թեմի հայոց առաջնորդին, մոմավաճառության արդյունքից տարեկան 3000 ռ. հատկացնել Թիֆլիսի Գայանյան դպրոցին]: 1915, էջ 261:

7086. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ օրհնության՝ Հայոց Ազգագրական Ընկերության անունով նրանց նվիրած «Վասպուրականի հայերեն ձեռագրերի ցուցակը» գրքի համար]: 1915, էջ 425:

7087. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ օրհնության՝ Հովհաննես Գևորգի Խաթունյանցին՝ Նոր Նախիջևանում որբանոցի շենք կառուցելու համար], 1915, էջ 528:

7088. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ օրհնության՝ Մանուկ Միքայելի Պոպովյանցին՝ Նոր Նախիջևանի Հոիփսիմյան օրիորդաց դպրոցի համար 25.000 ռ. արժողությամբ շենք կառուցելու առթիվ]: 1915, էջ 527:

7089. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ օրհնության՝ Նիկողայոս Առաքելյանին՝ Բաքվի ս. Լուսավորիչ եկեղեցու բակում իր ծախքով երկհարկանի շինություն կառուցելու համար]: 1915, էջ 424—425:

7090. [ԳԵՎՈՐԳ Ե:—Կոնդակ օրհնության՝ Քերովբե Միքայելի Պոպովյանցին Նոր Նախիջևանի եկեղեցական աղքատախնամ հոգաբարձության պատկանող տեղի վրա, 40.000 ռ. արժողությամբ, հայ մանուկների համար մանկապարտեզ կառուցելու համար]: 1915, էջ 527—528:

